

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՎԵՐՆԱՏԱՆ» ԶԱՎԱԿՆԵՐԸ

1186314

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 103913

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՎԵՐՆԱՏԱՆ» ՁԱՎԱԿՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3 (5Հ)
Ի 755

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դևրիկյան

Իսահակյան Ավիկ Վիգենի
Ի 755 «Վերնատան» զավակները/Ա.Վ. Իսահակյան. – Եր., «Գիտություն» հրատ., 2017, 64 էջ:

Հեղինակը ծավալուն փաստագրական նյութի հիման վրա (հոդվածներ, հուշեր, չափածո գործեր, տարեգրական գրառումներ և նամակներ) ներկայացնում է «Վերնատան» անդամներից յուրաքանչյուրի գործունեությունն առանձին ստեղծագործական դիմանկարի ձևով, իսկ շարքն իր միասնականությամբ կերտում է «Վերնատան» ամբողջական պատկերը:

Գիրքն ուղղված է ընթերցող լայն շրջաններին:

Կազմին պատկերված է Դմիտրի Նալբանդյանի «Վերնատուն» կտավը:

ISBN 978-5-8080-1281-3
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2017
© Ավիկ Իսահակյան, 2017

«ՎԵՐՆԱՏԱՆ» ՍԿԻԶԲԸ

«Սարդ վեր,
Սարդ վեր...»:
Քևոն Ճանթ

XX դարի սկզբում Թիֆլիսում գործող հայ առաջին գրական խմբակի՝ «Վերնատան» մասին իրենց հուշերում, հոդվածներում և նամակներում արժեքավոր տեղեկություններ են թողել հայ գրականության դասականները՝ վերնականներ Թումանյանը, Իսահակյանը, Դեմիրճյանը, Շանթը և Աղբալյանը:

«Վերնատունն» ստեղծվում է 1899 թվականի աշնանը, երբ Հովհ. Թումանյանը նոր բնակարան է վարձում Թիֆլիսի Բեհբության փողոցի N 50 տան V հարկում: Ահա «Վերնատան» ձևավորման առաջին վկայությունները Ավետիք Իսահակյանի «Հովհաննես Թումանյան» հուշերից. «Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա (Հովհ. Թումանյանի,- Ա. Ի.) մոտ՝ իրար տեսնելու և զրույց անելու: Այսպիսով նրա տունը դարձել էր մեր հավաքատեղին: Թեյ էինք խմում, ընթրում, խոսում: Ձմեռը վառվռուն բուխարիկի շուրջը նստած՝ կատակում էինք, անվերջ զրույց անում, խոսում, վիճում»[1]:

Թիֆլիսի հին թաղերից մեկում՝ Բեհբության փողոցում գտնվող Թումանյանի վարձած նոր բնակարանը զգալի մեծ էր առաջվա բնակարանից: Բանաստեղծը իր նոր տան մեջ մի ընդարձակ սենյակ՝ պատերը մեծ մասով պատած գրապահարաններով, հատկացրել էր որպես սենյակ-հավաքատեղի իր ընկերների համար: Թումանյանի, բայց առավել Իսահակյանի ընկերը՝ հայագետ և մշակութաբան, «Գեղարվեստ» ամսագրի խմբագիր Գարեգին Լևոնյանը, առաջին անգամ «Գեղարվես-

---

[1] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 5, Երևան, 1975, էջ 54:

տում» տպագրելով «Վերնատան» զավակներին ծոնված Դերենիկ Դեմիրճյանի բանաստեղծական շարքը (տե՛ս ԳԱԹ, ԳԼՖ, N 2418), թողել է սույն արժեքավոր ծանոթագրությունը. «1905-6 թվերին Հովհաննես Թումանյանը Թիֆլիսում ապրում էր Բեբութովյան փողոցի տան մի գավթում, Դ հարկի մի բնակարանում: Այդ բնակարանի մի ապակեպատ սենյակը գրողները կոչել էին «Վերնատուն», ուր շարունակ հավաքվում էին նրա մշտական անդամները՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը: Դրա անդամների խմբանկարը տե՛ս Գեղարվեստ, N 5, երես 91. Խմբագրություն»[2]:

Այս վկայությունը՝ բարձրադիր սենյակի և ապակեպատ պատի վերաբերյալ, բնորոշում է սենյակի արտաքին տեսքը (ի դեպ, հենց այդպես էլ ներկայումս Հ. Թումանյանի երևանյան թանգարանում վերստեղծված է «Վերնատունը»):

Սակայն վերադառնանք Իսահակյանի հուշերին. «Ինքնաբերաբար, մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ զարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ: Օհաննեսն ասաց, թե Գոնկուր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին՝ Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տուրգենև, Հյուսիմանս...), որ հավաքվում էր Գոնկուրների տան վերնահարկում, որին «Ամբար» անունն էին տալիս: Նույն նմանողությամբ, չեմ հիշում ում կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը, իսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանը այն ժամանակ չորրորդ հարկում էր: Կնքեցինք «Վերնատուն» անունով մեր հավաքույթների վայրը: Այդ անունն այլևս ընդմիշտ կապվեց մեզ հետ և քաղաքացիություն ստացավ»[3]:

Իսահակյանի՝ բերված պատմությանը ասես կարևոր լրացում է անում Դերենիկ Դեմիրճյանի «Հովհաննես Թումանյանի

---

[2] «Գեղարվեստ», Թիֆլիս, 1917, N 6:

[3] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 55:

մասին» փայլուն հոդված-հուշագրությունը՝ գրված 1939 թվականին Հ. Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ, սակայն այդպես էլ գրողի կենդանության օրոք չտպագրված: «Թումանյանի բարձրադիր բնակարանում հետզհետե, ավելի հաճախակի, սկսեցինք հանդիպել Շանթը, Ավ. Իսահակյանը, Աղբալյանը, ես, ինչ խոսք, որ մեզանից առաջ էլ այնտեղ միշտ լինում էր Դազարոս Աղայանը:

Խմբակը կազմվեց աննախընթաց եռանդով և վճռականությամբ: Այն երեկոն, երբ ուշ գիշերով, ընթրիքից հետո կազմվեց խմբակը, հիշում եմ, որ կարևոր համարվեց անմիջապես մի անուն ևս գտնելու խմբակի համար: Առաջարկվեց[4] «Վերնատուն» անունը՝ իբրև Թումանյանի բարձրահարկ բնակարանին հարմար անուն:

Այդ դուր եկավ մեզ: Դա հիշեցնում էր մի ուրիշ վերնատուն, ուր հավաքվեցին Քրիստոսի աշակերտները: Դրա մեջ ինչ-որ հոգեկան ներքին իմաստ կար...»[5]: Այս համեմատությունը Դեմիրճյանը ավելի զարգացնում է իր «Վերնատուն (հուշեր)» վերնագիրը կրող ոչ մեծ հուշագրությունում՝ նույնպես գրված 1939 թ. և տպագրված նույն թվականին «Բանվոր» թերթում (ապրիլի 15): Դեմիրճյանը գրում է. «Թումանյանը ապրում էր հինգերորդ թե վեցերորդ հարկում, Բեհբության փողոցի վերին մասերում, բուսաբանական լեռան ստորոտին: Այդ բարձր բնակարանի սենյակներից մինը մեր հավաքատեղին էր և տեղի բարձրության պատճառով, նաև Քրիստոսի աշակերտների «Վերնատանը» հավաքվելու և Սուրբ հոգուց շնորհք ստանալու կատակով արած նմանությունը մեջ բերելով՝ կազմակերպությունը կոչեցինք «Վերնատուն»[6]:

---

[4] Ինչպես տեսնում ենք, Դեմիրճյանն էլ չի գրում, թե ով էր անմիջական հեղինակը «Վերնատուն» անվան:

[5] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու 14 հատորով, հտ. XIV, Երևան, 1987, էջ 242:

[6] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XII, Երևան, 1985, էջ 171:

Իսահակյանը 1900 թվականի մայիսին մեկ տարուց ավել տևած ուղևորության է մեկնում Արևմտյան Եվրոպա: Այսպիսով, հազիվ էր սկսել իր աշխատանքները «Վերնատունը», երբ նրա հիմնադիր անդամներից մեկը երկար ժամանակով հայրենիքից բացակայում է: Սակայն «Վերնատունը» մշտապես Իսահակյանի գլխի մեջ էր, այսպես. Ցյուրիխից 1900 թ. հոկտեմբերի 21-ին Հովհ. Թումանյանին ուղարկած նամակում նա հարցնում է. «Ինչպե՞ս է քեֆդ, ի՞նչ ես անում, ի՞նչ է անում Շանթը, ո՞ւր է Դերենիկը (Աղբալյանին նամակ գրել եմ Մոսկվա), ի՞նչ հալի մեջ է Վերնատունը»[7]: Իսկ արդեն վերադարձից հետո, դեռ մինչև Թիֆլիս գալը, նա Ղազարապատից նույն հարցումն է անում Թումանյանին (1901, սեպտեմբերի 12). «Դերենիկից խաբար չունի՞ս, ի՞նչ է, դեռ չէ՞ եկել այդտեղ: Իսկ Շանթից ի՞նչ ունես գրելու: Ես որ գամ, տեսնենք Վերնատան հալը ի՞նչ է լինելու, երևի առանց դրան մեր օրը սև կանցնի»[8]:

Իր հերթին Թումանյանի կողմից «Վերնատան» անվան առաջին հիշատակմանը մենք հանդիպում ենք Իսահակյանին ուղարկած նրա նամակում (1901, 21. սեպտեմբերի). «...«Վերնատան» մասին ես հարցնում: Առանց «Վերնատան», իհարկե, ապրել չի լինիլ: Երբոր դու կգաս, Նիկոլն էլ այստեղ է, Դերենիկն էլ կգա - կսկսենք»[9]:

Մենք հստակ տեսնում ենք, թե ինչ նշանակություն է ունեցել «Վերնատունը» նրա «զավակների» կյանքում: Եվ արդեն գործուն մասնակցություն ունեցավ Իսահակյանը «Վերնատանը»՝ սկսած 1901 թ. աշնանից, երբ ինքն ապրում էր Թիֆլիսում:

«Վերնատան» հիմնական վեցյակը, ճիշտ է, իր շարքերում նոր անդամներ չէր ընդունում, սակայն կային հեղինակներ, որոնց համար «Վերնատան» դռները միշտ բաց էին՝ Պռոշյանը,

---

[7] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 6, Երևան, 1979, էջ 29:
[8] Նույն տեղում, էջ 37:
[9] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հտ. 9-րդ, Երևան, 1997, էջ 282:

Վրթ. Փափազյանը, Մուրացանը, Նար-Դոսը, ինչպես և նկարիչներ Գ. Բաշինջաղյանը, Մ. Սարյանը, Փ. Թերլեմեզյանը, երգահաններ Ա. Տիգրանյանը, Կոմիտասը: Այս արվեստագետները հաճախում էին «Վերնատուն» հարգելի հյուրի կարգավիճակով: Ահա այդպիսի մի դրվագ է հիշում Իսահակյանը՝ կապված հայ մեծանուն վիպասան Մուրացանի հետ. «Մուրացանի հետ ծանոթացա միայն 1902-1903 թվականներին, Հովհաննես Թումանյանի մոտ, մեր Վերնատանը: Երբեմնակի գալիս էր նա Թումանյանի մոտ: Շատ հարգալից էինք նրա հանդեպ: Նստում էր Թումանյանի կողքին և լուռ լսում էր մեզ: Վերնատան նահապետը՝ Ղազարոս Աղայանը, բարձր ու հզոր ձայնով խոսում էր, Թումանյանը ուրախ բաներ էր պատմում, ու Մուրացանի աչքերը ժպտում էին մեղմորեն: Թվում էր, թե հաճելի էր նրան մեր շրջանը»[10]:

«Վերնատան» տանտերը թիֆլիսահայության սիրելին էր, փնտրված մարդ, այնպես որ թե՛ ինքը սիրելի հյուր էր, թե՛ բոլոր հյուրերն էլ «Վերնատուն» էին գալիս սիրով:

[10] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 5-րդ, էջ 40:

«ՎԵՐՆԱՏԱՆ» ՆԱՀԱՊԵՏԸ

«Ես հիացած նայում էի Աղայանի վրա՝ առողջ, գեղեցիկ, ֆենևուրախ, գարերային: Կարծես հեքիաթների միջից եկած, մեր իրականության մեջ քայլող մի կորապես իշխան լիներ, լեռների քաջ որսկան, աշխարհն աշխարհ կրող քարավանապետ»:

Ավետիք Իսահակյանի «Ղազարոս Աղայան» հուշագրությունից:

«Վերնատան» նահապետի տիտղոսը տրված էր Ղազարոս Աղայանին, և այդպես էլ պետք է լիներ թե՛ տարիքի բերումով, թե՛ նրա ունեցած վիթխարի հեղինակության՝ հայության բոլոր շրջաններում: Իսահակյանն այդ առնչությամբ գրում էր. «Առաջին խոսքը պատկանում էր Ղ. Աղայանին, որին Նահապետ էինք անվանում: Գրականության նահապետ: Նրան հարգում էինք և սիրում: Ուշադրությամբ էինք լսում նրա կարծիքները, դիտողությունները: Մեր երեկույթներին, զիջելով մեր թախանձանքներին, Աղայանը երգում էր սիրած Քյորօղլու ասպետական երգերը, իրեն՝ Աղայանի հրաշալի թարգմանությամբ: Պարթև հասակով կանգնում էր նա, հուժկու ձեռքերը շարժելով, բամբ ձայնով կատարում էր Քյորօղլին»[11]:

Աղայանն ուներ բարձր բանաստեղծական ինտուիցիա, որն անխափան էր գործում: Ինչպես ավանդությունն է հավաստում, «Վերնատան» հերթական հավաքներից մեկի ժամանակ խոսքը Ղազարոս Աղայանինն էր. «Ահա արդեն «Դրոշակի» մի քանի համարներում ես հանդիպում եմ «Հայդուկի երգերից» անվանումը կրող բանաստեղծությունների մի խորհրդավոր ստորագրությամբ՝ «Հայ գուսան», կարդում եմ համարից համար՝ ավելի հավանում, բայց գլխի չեմ ընկնում, թե հեղինակն ով է, մի բան

[11] Նույն տեղում, էջ 54:

պարզ է միայն, որ մերոնցից է, կովկասահայ և այն էլ իսկական բանաստեղծ, ա'յ խնդրեմ լսեցեք»: Եվ կարդում է 1900 թ. «Դրոշակի» N 3-ում տպագրված «Գուրգենի անմահ հիշատակին» բանաստեղծությունը՝ «Գըլգըլալով ջուր է իջնում / Մշու մշուշ սարերեն» սկսվածքով:

Մի պահ լռություն է տիրում:

- Ավետիք, չլինի՞ «Հայ գուսանը» դու ես,- լռության մեջ լսվում է Նիկոլ Աղբալյանի ձայնը:

- Ես այդպես էլ գիտեի, Նիկոլ, որ դու առաջինը կճանաչեիր, թե ով է «Հայ գուսանը»:

- Դե, ասեք հայդուկը մեր մեջ է,- ուրախացավ Աղայանը, ապա խոշոր ձեռքերով գրկելով Իսահակյանին, ճակատին մի համբույր դրոշմեց»[12]:

Դերենիկ Դեմիրճյանն էլ վկայում է. «Ղազարոս Աղայանը ընդունվեց այդ խմբակում իբրև «նահապետ»: Նա պատվավոր անդամն էր «Վերնատան»: Թումանյանի ստեղծագործական և ընկերական կապը այնքան հարգելի էր մեզ համար, որ համաձայնվեցինք մեր գրական ժառանգորդական կապը անցյալ գրականության հետ հաշվել Աղայանի գծով: Ճիշտ է, այնուհետև շատ էր խոսք լինում Հովհաննես Հովհաննիսյանի մասին, որ նա է նոր բանաստեղծության մեր նախորդը, բայց Աղայանի ստեղծագործության ժողովրդական ուղղությունը, նրա ռեալիզմը, նրա անձնավորությունը հաղթեցին, և մենք Աղայանին համարեցինք մեր «Վերնատան» հարազատը»[13]:

Իր հրաշալի «Նվեր Վերնատանը» բանաստեղծության մեջ Դեմիրճյանը Աղայանին է հղում իր առաջին ներբող արձակ-բանաստեղծությունը.

---

[12] Իսահակյան Ավ., Հայդուկի երգեր, Երևան, «Արևիկ», 1990, էջ 3, 4:
[13] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 242:

«Ինչ թեթև՜ է թրթռում թիթեռը, ինչի՞ց է, որ նա չի հակվում դեպի գետինը:

- Անհոգ է նա, հոգսն է միայն, որ ծանրացնում է մարմնի քաշը և հակում դեպի գետինը: Նայի՛ր, նստեց ճահճի տիղմի վրա, ինչի՞ց է որ այնպես ճերմակ-մաքուր են նրա թևերը:

- Անմեղությունը կեղտ չի վերցնում: Ինչպե՜ս մի րոպե հանգիստ չի նստում տեղը, ինչպե՜ս պոկվում է տեղից, ինչպես ուզում է թռչել վե՜ր, վե՜ր, դեպի երկնքի կապույտ անդունդը:

- Ճշմարիտ է. ինչպես գոլորշին, ինչպես ջերմությունը, ինչպես աղոթքը՝ այնպես էլ մաքուր և ջերմ սրտերը թռչում են վեր, միշտ վեր, դեպի եթերքի ջինջ կապույտը»[14]:

Վերնատան Աղայանի հրաշալի դիմանկարն է տալիս իր հուշերում Իսահակյանը. «Ղ. Աղայանին ավելի մտերմացա 1900-ական թվերին, երբ կազմվել էր մեր «Վերնատունը» և հաճախակի հանդիպումներ ու գրական զրույցներ էինք ունենում Հ. Թումանյանի տանը և երբեմն էլ Աղայանի մոտ: Նա այլևս մեր գրական նահապետն էր: Ինքը գրեթե դադարել էր գեղարվեստական բաներ գրելուց, բայց իսկական հոր պես հրճվում էր մեր «Վերնատան» ընկերների գրական հաջողություններով: Մենք նրան շատ սիրում էինք և հարգանքով էինք վերաբերվում նրա կարծիքներին, նկատառումներին:

...Աղայանը խորքով օպտիմիստ էր, վիշտն ու տխրությունը չափազանց կարճատև պահեր էին նրա մոտ: Կարելի է ասել, որ նա իր կյանքում երբեք չհիասթափվեց, միշտ մնաց ոգևորված, հավատով... Աղայանը պարզ, հասարակ, ընկերական մարդ էր, այն, ինչ որ ուրիշները փակում էին յոթը կողպեքի տակ, նա սրտաբաց ասում էր, պատմում էր իր անցյալից դեպքեր, ար-

[14] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. I, Երևան, 1976, էջ 63:

կածներ, անեկդոտներ... Միամիտ էր շատ, ունեցածը՝ երեխայի խորամանկություն, այնպես թափանցիկ էին նրա մտքերը: Սիրտը լեզվի վրա էր»[15]:

1905 թվին՝ Ամանորի օրը՝ հունվարի 1-ին, Թումանյանն իր «Բանաստեղծություններ» (1903) ժողովածուն նվիրում է Ղազարոս Աղայանին հետևյալ ընծայագրով. «Իմ անգին Ասլան ապորը - Ղ. Աղայանին»: Իսկ գրքի անվանաթերթին թողնում է հետևյալ էքսպրոմտը.

Անցավ հին տարին, կանցնի և նորը,
Կանցնի՞ արդյոք մեր անբախտ օրը[16]*:*

Բոլորը, բոլորը շատ էին սիրում Աղայանին, այդ է վկայում Աղբալյանի՝ Թումանյանին ուղղված նամակում հետևյալ հատվածը (1907, 11 հունիսի, Փարիզից). «Մեր Նահապետն ինչպե՞ս է, այդ ժխորի մեջ, երևի, այնպես է զգում, ինչպես մեկը խոջի բաղնսում, իր պարզ խելքով նայում ու զարմանում է, թե ի՞նչ են իրար միս գգում, գրազ կգամ, որ դաշնակցական չէ և ամեն օր հետդ վիճում է. իմ սրտագին բարևները և որդիական հարգանքս»[17]:

Արդեն միայն Աղայանի պես վիթխարի հեղինակության անդամակցությունը «Վերնատանը» ոգևորում և խանդավառում էր նրա երիտասարդ անդամներին:

---

[15] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 5-րդ, էջ 37:
[16] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1-ին, էջ 397:
[17] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4-րդ, Երևան, 1991, էջ 382:

«ՎԵՐՆԱՏԱՆ» ԿԱՆԹԵՂԸ

«Դու՛ք ևք աչքիս երևում,
Դու՛ք, ապ Հայոց աշխարհի...»:
Ն. Աղբայանի համակիր՝ գրած Հովհ. Թումանյանին (1904, հունվար 7)

Եվ թեև «Վերնատան» նահապետն էր Աղայանը, սակայն «Վերնատուն» ստեղծողը, մշտագործիչ մարտկոցը, առանցքային դեմքը Հովհաննես Թումանյանն էր: Դե, ասենք, հենց «Վերնատան» ստեղծելու միտքը շատ նման էր Թումանյանին, նա ուզում էր, որ լինի մի անկյուն այս մեծ աշխարհում, ուր ինքը և իր համախոհ ընկերները հավաքվեին և զբաղվեին իրենց սիրած գործով՝ գրականությամբ: Նրանք համախոհներ չէին միայն, նրանք հայ գրականության վաղվա օրն էին, ճակատագրի բերումով գտել էին միմյանց և Թումանյանի գաղափարով համախմբվել մեկ ընդհանուր ուղղվածություն ունեցող խմբավորման մեջ: Եվ այդ զորեղ անունները պիտի կերտեին XX դարի հայ գրականության դեմքը:

Նշանակալից է Իսահակյանի ուղերձը՝ հղած իր ընկերոջը՝ Թումանյանին, 1903 թ. հուլիսի 21-ին. «Մեծ սպասելիք ունեմ Սինամ թագավորիցդ, քանի որ նրա մեջ կա քո անձնական ստեղծագործությունդ, կա սիմբոլ և գեղեցիկ պատկերներ, անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու համար «Անուշը»... Բայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր գրականության մեջ դարաշրջան են կազմելու: Ապրիր և ստեղծագործիր - ահա քո ուղին, մեզ թող կռվի դաշտը, ինչ կուզե թող լինի.- «Թող կործանվի աշխարհը, և ես կընկնիմ նրա ավերակների տակ», սա Հորացիոս բանաստեղծի խոսքերն են, որ իմ վերջին տրամադրության լոզունգն է, նշանաբանը»[18]:

---

[18] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 6-րդ, 1976, էջ 41:

Դերենիկ Դեմիրճյանի «Նվեր Վերնատան» բանաստեղծության մի գողտրիկ հատվածն նվիրված է Բեհբության 50 տան տիրոջը՝

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Երբ մանուկ էինք՝ սիրում էինք խաղալիք: Դարձանք պատանի՝ սիրեցինք մեր նմանին: Երիտասարդ էինք՝ սիրեցինք փառք, գործ, գիտություն: Կծերանանք՝ պիտի սիրենք հարգանք, դրամ, հանգիստ և մեր սերունդը:

Սակայն երբ անհունի դռներին հասած՝ պիտի լսենք հավիտենության շունչը՝ Գիտե՞ս ինչ պիտի սիրենք.

Աղո՜թքը...»[19]:

Թումանյանապաշտ Դեմիրճյանը գրում է. «Թումանյանը գլխավորում էր կազմակերպությունը՝ իբրև նրա իրական ուժը, գրական մեծ արժեքը: Ավետիք Իսահակյանը կազմում էր այդ գրական կոլեկտիվի ոսկե ֆոնդը, իսկ ես դեռ «ձայն էի պահում» իբրև ապագա խոստացող և ամենից կրտսերը... Թումանյանը շարժիչ ուժն էր «Վերնատան»: Նախ և առաջ նա ուներ հարուստ գրադարան, առանձնակի սենյակ, հյուրասեր սեղան, ընկերության տաքացնող զվարճախոսություն և, որ գլխավորն է, գրական-հասարակական ուժեղ դիրք: Այն ժամանակվանից իսկ արդեն զգացվում էր, որ Թումանյանի բնակարանը դառնում էր մի տեսակ գրական սալոն, գրական շարժման մի նոր կենտրոն, որի ֆոկուսը Թումանյանն էր»[20]:

«Վերնատուն» վերնագրով հուշային դրվագը, որի համար հիմք է ծառայել Դեմիրճյանի «Հովհաննես Թումանյանի մասին» հոդված-հուշագրությունը, գրվել է Թումանյանի մահից 16 տարի անց և տպագրվել 1939 թվին «Բանվոր» թերթում և ապա տարիներ անց՝ 1985 թվին, Դերենիկ Դեմիրճյանի ակադեմիականի XII հատորում, մինչդեռ «Հովհաննես Թումանյանի մասին» կոթո-

---

[19] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. I, Երևան, 1976, էջ 63:
[20] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XII, Երևան, 1985, էջ 172:

ղային հուշագրությունը անտիպ է մնացել և միայն 30 տարի անց առաջին անգամ տպագրվել է «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում[21]:

Լավ է, որ այդ հոդվածը հեղինակը չի ոչնչացրել «անհատի պաշտամունքի» տարիներին: Ասենք, Դեմիրճյանը գրել է այն հենց ի սկզբանե չտպագրելու նպատակով՝ թողնելով նրա հրապարակումը ապագային: Եթե նա մտադիր լիներ այն տպագրելու, մի՞թե այդպես հանգիստ կգրեր Ն. Աղբալյանի և Լ. Շանթի անունները: Ուրիշ բան «Վերնատուն» հուշային դրվագը. այ այստեղ նա շատ զգուշորեն գրում է. «Կազմակերպությունը մեծ չէր, այնտեղ մտան Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և մի երկու այլ գրողներ»[22]: Հասկանալի է, որ այդ երկու այլ գրողներն էին Աղբալյանը և Շանթը: Սակայն և մեծ հուշագրությունից առանձնացված «Վերնատուն» հուշ-դրվագը զգալի արժեք ունի, մենք Դեմիրճյանին ենք շնորհակալ, որ նա իր երկու հոդվածներում փաստորեն բացատրեց «Վերնատան» գաղափարական էությունը և խմբակի անելիքները: Դեմիրճյանը գրում էր. «Ի՞նչ էր «Վերնատան» ներքին էությունը, ինչո՞ւ առաջացավ այդ կազմակերպությունը:

«...«Վերնատան» անդամներն իրենց սահմանագծում էին Պատկանյանի և նրա հետևորդների ազգայնական տենդենցիոզ գրականությունից: Այն ժամանակ իսկ, թեև շատ դժվարին էր տարբերել, վերնատունցիները զատում էին ազգային և ազգայնական կուլտուրաները: Ապա նաև որոշ ձգտում կար մանավանդ Թումանյանի և Ավետիք Իսահակյանի մեջ՝ վճռապես գնալու ժողովրդական ստեղծագործությունների ուղիով: Աղայանն արդեն այդտեղից էր գալիս: Ես նրանց միանում էի, ըստ երևույթին, շատ տարբեր թևանցիկ շարժումով, բայց վերջնական նպատակակետը միևնույն տեղը - ժողովուրդը: ...Թող այն հանգամանքը, թե մենք որքան բարձր գրականություն ստեղծեցինք այն ժամա-

---

[21] Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 22-48:
[22] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XII, էջ 170:

նակ, բանը ձգտումն էր, սկզբունքը, ուղղությունը: ...Հավաքույթներն անցնում էին աշխույժ, ուրախ և սրտալի: Որքան նախաճաշեր դառնում էին ճաշ, ապա երեկոյան թեյ և վերջը կեսգիշերներից շատ անց ընթրիք ու լուսաբաց: Նահապետը (Ղազարոս Աղայանը) դեռ թարմ էր, Թումանյանը թև էր առնում ավելի լայն թռիչքի համար: Ավետիք Իսահակյանը պատրաստվում էր բաց անելու իր հոյակապ Շիրակի դռները: Կլասիկներով ոգևորված, նրանց անունները կատակով փոխառած Թումանյանը՝ Շեքսպիր, Իսահակյանը՝ Հայնե, ես՝ Բայրոն»[23]:

Այդպիսի մի վերնատանյան կեսգիշերային քեֆից հետո՝ լուսադեմին, «Օրփեյի թագավորությանը» հանձնվելու պահն է նկարագրում Դեմիրճյանը հումորով լեցուն իր գրական կատակներից մեկում (հարկ է ասել, որ այդ ժանրի լավ վարպետ էր Դեմիրճյանը).

Չորսին նոր պրծան կեր ու դավերը,
Դատարկ տնկեցին գինու գավերը.
Ամեն միննն առավ բարձի լավերը,
Թողին սարսաղիս անքուն ցավերը,
Ու իրենք ընկան քնի ծովերը.
Հնգին կանչեցին բակից հավերը:
Ամենից առաջ Շանթը շնթռկեց,
Նրանից հետո Նիկոլը կոլոլ
Երկուտակ պառկեց,
Քթով վեր քաշեց զուռնա ու դհոլ,
Հանեսն էլ հերսից
Խմածը մարսեց,
Այժմ, Դերենի՛կ,
Մնացիր մենիկ[24]*:*

---

[23] Նույն տեղում, էջ 172:
[24] Տե՛ս Ս. Հովհաննիսյան, Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը, Երևան, 2007, էջ 43:

Երբ կարդում ես այս տողերը, խորհում ես, որ հիրավի հազվագյուտ երջանիկ մի շրջան է եղել «Վերնատան» զավակների համար 1900-1910 թվականները՝ բոլորը դեռ երիտասարդ, ստեղծագործական վերելքի մեջ, Հայրենիքը՝ այսպես թե այնպես դեռևս հեռու պատերազմներից ու կոտորածներից: Ողջ XX դարի պատմության մեջ նման «խաղաղ» տասնամյակ չի լինի, իրոք որ «աստեղային տասնամյակ», ինչե՞ր գրեցին, ի՞նչ գրքեր հրատարակեցին, ուր հասցրին հայ գրականության փառքը: Եվ այս գործընթացում անուրանալի է «Վերնատան» դերը: Անուրանալի է «Վերնատան» մշտագործ մարտկոցի՝ Հովհ. Թումանյանի դերը, նրա եռանդը, կիրքը, ընկերներին համախմբելու ձիրքը, նվիրումը «Վերնատան» գործունեությանը: Այս ուժերի վատնումը, ինքն իրեն չխնայելը, «ոտքի վրա մաշվելը» նկատի ունի Շանթը, երբ գրում է (1903, հուլիսի 27-28) Աբասթումանում բուժվող Թումանյանին. «Պիտի ասես, թե էլ ինչի կը նմանի կյանքը. շատ ես սխալ, պարզապես վարժության խնդիր է... Հենց որ ուժերդ գալիս են, դու արդեն վատնում ես, վիճում, երգում, վազվզում, ինչպես սրանից տասը տարի առաջ: Դու այլևս երբեք ո՛չ վիճելու ես, ո՛չ վազելու ես, ո՛չ էլ երգելու, եթե ուզում ես, որ առողջ լինես ու առողջ մնաս, եթե ուզում եւ մի բան արտադրես, եթե ուզում ես մի բանի պետք գաս: Դու չափազանց ես անփույթ դեպի քեզ, ինչպես ընդհանրապես դեպի ամեն բան: Դե մի՛ բարկանա, վերջացրի և էլ այս մասին երբեք բերանս չեմ բանա...»[25]:

Մեկ տասնամյակ միայն վերելք. իրապես որ արդարացվեց խմբակի անունը՝ վեր-նա-տուն: Մի խմբակում դարիս ամենափայլուն գրական աստղերը: Վերնատան հերոսը Թումանյանն էր: Եվ դա այդպես էլ կար: «Օհաննեսը կենտրոնածիգ անձնավորություն էր,- գրում է Իսահակյանը Թումանյանին նվիրված իր հրաշալի հուշերում,- հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար

[25] Թումանյան Հովհաննես, Ուսումնասիրություններ և հոդվածներ, հտ. 4-րդ, էջ 376, 377:

հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի:

...«Վերնատանը» տեղի ունեցած զրույցներից հիշում եմ Օհաննեսի մի քանի խոսքերը գրականության մասին:

- Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինի:

- Ո՛չ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել:

- Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սրտով ու զգացմունքով:

- Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի»[26]:

Իսահակյանի դիմանկարը Թումանյանի մասին գալիս լրացնում է իր հուշերում Դեմիրճյանը. «Ասել, թե Թումանյանը ոչ լրիվ, այլ գոնե բավականաչափ, կարդացել էր համաշխարհային կլասիկներին՝ դա կլիներ սխալ: Բայց նա Շեքսպիրի մի քանի տրագեդիաներին լավ էր ծանոթ: Ուսումնասիրում էր առանձնապես «Համլետը», համեմատում էր ռուսերեն և հայերեն թարգմանությունները, նայում անգլերեն-ռուսերեն բառարանները, դրանց միջոցով ճշտում զանազան ֆրազներ: Սիրում էր երկար խոսել «Համլետի» մասին:

Հունական տրագեդիայի ընթերցումներին և քննադատություններին մասնակցում էր մեծ սիրով, թեև նրանցով զբաղվելու դրդել էր Շանթը, որ սկսել էր հետաքրքրվել դրամատուրգիայով: Սիրում էր խոսել նաև Գյոթեի մասին: Հատկապես սիրում էր Պուշկինին և Լերմոնտովին: Բայց ինչ կլասիկի մասին էլ խոսեր, վերջը կրկին գալիս էր իր առանձնապես սիրած «Համլետին»:

Ինձ միշտ թվացել է, որ նա ստեղծագործության գաղտնիքները վերցնում էր Շեքսպիրից և գործադրում Պուշկինի նման:

...Ես չեմ կարող ասել, որ Թումանյանը ժխտում էր, օրինակ, Գամառ-Քաթիպային, որովհետև սա ազգայնական բանաս-

---

[26] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 5-րդ, էջ 54, 56:

տեղծ է: Բայց միաժամանակ չեմ կարող Թումանյանին համարել Գամառ-Քաթիպային համակրող բանաստեղծ: Թումանյանը դեմ էր ազգայնական ուղղության ոչ նրա համար, որ ինքը ազգայնական մտայնություն չուներ: Նա հիացմունքով էր խոսում Ռաֆֆու մասին: Աբովյանը նրա մշտական զբաղմունքի առարկան էր: ...Նա մեծապես ձգտում էր ազգային համերաշխության ուրիշ ազգերի վերաբերմամբ և հոգու խորքում ընդհանրապես հումանիստ էր շեքսպիրյան տիպի: Գրական ռեալիզմը, նրա ժողովրդական դեմոկրատական ոգին մեծապես օգնեցին Թումանյանին սթափ մնալու ազգայնական գրական ուղղությունից: Թումանյանը ամեն անգամ խորանում էր ժողովրդական ստեղծագործությունների լուսաբանության մեջ: Ժողովրդի կյանքը, ձգտումները, փիլիսոփայությունը, բանահյուսությունը, լեզուն՝ այս ամենը նրա ուղեցույց փարոսն էին»[27]:

Մենք հստակ պատկերացնում ենք, որ իր ընկերների համեմատ քիչ թե շատ ապահով վիճակը Թումանյանինն էր: Նախ նա ուներ իր հրաշալի ընտանիքը, տիկին Օլգան և բազմաթիվ զավակներ, իր տունը, տեղը, առանձին սենյակ-սալոնը՝ «Վերնատունը», որտեղ շատ հաճախ օրերով ապրել են Դեմիրճյանը, Աղբալյանը, Շանթը: Եվ բոլոր վերնականները միաձայն գրում են այն մասին, որ Թումանյանը չափից ավելի հյուրասեր, առատաձեռն մարդ է եղել, նրա սեղանատան սուփրան պատկերավոր ասած երբեք չի հավաքվել: Իսկ երբ Թումանյանը որոշակի ժամանակով բացակայել է Թիֆլիսից (ինչպես, օրինակ, 1902 թվականի աշնանը, երբ պոետը բուժվել է Աբասթումանում), վերնականները իրենց լքված ու միայնակ են զգացել, այնպես, ինչպես իր կատակ չափածո տողում գրում է Դեմիրճյանը.

Բոտանիկյան այգու վզին
Բողոքում ենք, որ համադամ
Մենք՝ Վերնատան իբրև անդամ,

---

[27] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 243, 245, 248:

Բան չի տեսավ մեր խեղճ ատամ,
...Ու գնում ենք հիմա դարդակ,
Մեղավոր ես աստրծու տակ...

1900-ական թվականներին երիտասարդ վերնականներից դեռ ոչ մեկը ամուսնացած չէր: Եվ տնային մթնոլորտ, ընտանիքի ջերմություն, քաղցր զրույց թեյի սեղանի շուրջ՝ այս ամենը նրանց համար իրական էր դառնում միմիայն Թումանյանի հյուրընկալ օջախի շնորհիվ:

«Վերնատան» մթնոլորտը իր հուշերում շատ անմիջական է ներկայացնում բանաստեղծի դուստրը՝ Նվարդը. «Վերնատան հավաքույթներն ունեին իրենց երկրորդ մասը՝ ուրախ ժամանցը. թեյ, ընթրիք, երգ, քեֆ, անեկդոտներ, զվարճալի ու սրամիտ պատմություններ՝ գրական այլևայլ մարդկանց կամ իրենց կյանքից: Այդ երեկոներին երգում էին զանազան երգեր, ինչպես «Քյորօղլի», Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն իմաստուն իս» և այլն: Վերնականների կյանքից նկարում էին զանազան ծաղրանկարներ, գրչի հանաքներ անում, որոնց հեղինակը Դերենիկ Դեմիրճյանն էր:

Կին հյուրերին ասում էին վերնանուշներ: Գրական հավաքույթներին հյուրերը մշտապես հյուրասիրվում էին քիշմիշով և լաբլաբուով, որին ասում էին վերնահատիկ:

...Վերնատունն ուներ իր մշտական հյուրերը՝ ինչպես Ֆիլիպ Վարդազարյան, բժիշկ Արիստակես Զարգարյան, իշխանուհի Մարիամ Թումանյան, պատմաբան Հակոբ Մանանդյան՝ իր կնոջ հետ, և էլի ուրիշներ»[28]: Նվարդ Թումանյանը իր հուշերում պատկերել է նաև «Վերնատան» արտաքին տեսքը. «Վերնատան բնակարանն ուներ լայն, երկար, լուսավոր, գեղեցիկ միջանցք հայրիկի սենյակից մինչև պատշգամբը: Միջանցքի երկու կողմի պատերից հայրիկը կախել էր հունական և հռոմեական դիցաբանությունից նկարներ, հիշում եմ Զևս, Հերա, Ապոլլոն, Վեներա և

[28] **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, Երևան, 2009, էջ 14, 15:

ուրիշներ: Մեր նոր բնակարանը հինգերորդ հարկում էր, Բուսաբանական այգու դիմաց, երկու կողմից պարտեզ ուներ, գեղեցիկ տեռաս»[29]:

Նորից խոսքը տանք Դեմիրճյանին. «Թումանյանը թովիչ հատկություն ուներ: Արդեն նրան տեսնելով դահլիճի մեջտեղ կամ առանձնասենյակի թիկնաթոռին, կամ սեղանատանը սեղանի գլխին նստած՝ ներս մտնելիս հյուրը զգում էր, որ սենյակը լիքն է: Թումանյանը լցնում էր բնակարանը, մարդկանց հավաքույթը: Նրա դահլիճը «մեջլիս» էր: Իսկ այդքան հյուրերի բազմությունը, հաճախությունը, հազար ու մի առիթներով գնալ-գալը, այդ հացկերույթները, աշխույժը՝ նրա տունը դարձրել էին վանք, տոնախմբություն, շարունակական, հարատև, տեսակցությունների վայր»[30]:

---

[29] Նույն տեղում, էջ 12,13:
[30] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. X, Երևան, 1985, էջ 255:

«ՎԵՐՆԱՏԱՆ» ՀԱՅԴՈՒԿԸ

«Հայոց լեզուն կորևա փոխվիլ, բայց անոր լավագույն երգերը կմնան ու կխոսին հայ սրտերում...»:
Նիկոլ Աղբալյանը Ավետիք Իսահակյանի առնչությամբ[31]:

Թումանյանից հետո «Վերնատան» երկրորդ կարևոր դեմքը Ավետիք Իսահակյանն էր՝ երիտասարդ, բայց արդեն լայն ճանաչում ձեռք բերած պոետ:

Թերևս Դեմիրճյանի «Նվեր Վերնատան» ձոներգերի շարքում լավագույն երկը կարելի է համարել «Ավ. Իսահակյանին» ուղղված բանաստեղծությունը (բերում ենք հատվածաբար).

Է՜յ, Ավո՛ջան, հիշո՞ւմ ես
Ալագյազը վեհ ու վես,
Շիրակ դաշտը ծովի պես,
Մենք ճամփորդներ՝ դուն ու ես:

Մ՞ի, ինչ լա՞վ էր, հրաշալի՜,
Դու քեզ հաշվող մի Գյոթե,
Ես էլ Շիլլեր իբրև թե.-
Երկուսս էլ վես պատանի...

...Մի՞տդ է հովը մեղմակի,
Վեհ գիշերը Շիրակի,
Ձայնը քարվան-զանգակի,
Քո մտքերը միստիկի...

Պառկում էինք ծեր կտրան,

---

[31] Աղբալյան Ն., Ընտրանի, «Ավետիք Իսահակյան», Երևան, 2005 թ., էջ 83:

Աստղոտ երկինք մեր վրան՝
Ու մտքերով սո՜ւր թռչում
Դեպի աստղեր ու կորչում...

...Ապա Անի՜ն պանծալի,
Շքեղ տիկինն երբեմնի,
Իր զարդերով հրաշալի
Հիմա փշուր, սգալի...

...Մի՞տդ է, որ հյուր գնացինք
Ալագյազին երկնածիգ
Այն գիշերը գեղեցիկ,
Աստեղավառ, թափանցիկ:

...Ո՞ւր են, ո՞ւր են այն օրեր,
Այն ծաղկունքը ցոլցլուն,
Այն ջրերը զղզղուն,
Այն հովերը օրորուն...

Թռա՜ն, կորա՜ն այն օրեր
Հավքերի հետ, հովի հետ,
Մարոյի զի՜լ երգի հետ,
Կորան անհետ ու հավե՜տ...

Այսպես է հիշում Իսահակյանի հետ իր ճամփորդությունները հայրենի երկրում Իսահակյանի պոեզիայի մեծ երկրպագու երիտասարդ բանաստեղծ Դեմիրճյանը: Իր «Հուշերում» Դեմիրճյանը փորձում է ժամանակի, անձնական հանդիպումների և Վերնատան ֆոնի վրա ցույց տալ Իսահակյան բանաստեղծի և մտածողի կերպարը:

«Ավետիքը գալիս էր ուրույն ոճով ու լեզվով: Դա մեծ նորություն էր: Նրանից առաջ և նրա հետ միասին Հովհաննես Հովհան-

նիսյանն ու Հովհաննես Կոստանյանը տվել էին ժողովրդական երգի նմուշները: Ճշմարիտ է, որ Հովհաննիսյանի «Արազն եկավ»-ը հալյուցինացիայի պես ազդեց Ավետիք Իսահակյանի վրա, բայց Հովհաննիսյանի ժողովրդական երգը մնաց ժողովրդական երգի սահմաններում: Ավետիք Իսահակյանը խորացրեց և ծավալեց ժողովրդական երգի կուլտուրան թե՛ իբրև արտաքին ձև և թե՛ իբրև մանավանդ բովանդակություն: Դա բոլորովին նորություն էր:

...Ավետիք Իսահակյանը իսկույն գրավել էր հասարակության համակրանքը, նա նվաճել էր և՛ անուն, և՛ դիրք, հասել էր ոճի և վարպետության կայունացման աստիճանին: Բայց դժգոհ էր, դժգոհ ո՛չ պոեզիայի ոճական-ձևական հարցերում, դժգոհ էր կյանքի, ներանձնական, համաշխարհային խնդիրներում: Նա գրում էր ոչ բանաստեղծություններ գրած լինելու համար, այլ իրեն տանջող մտքերին ու զգացմունքներին ելք որոնելու համար: ...Ավետիքի պոեզիայի ինքնատիպությունն այսպիսով ոչ թե նրա լեզուն ու ոճն էին ինձ համար, այլ նրա բովանդակությունը, իր որոնումներն ու գյուտերը, վերջապես՝ ինքը... Ավետիք Իսահակյանը ստեղծագործության մեջ որոնում է նրա խորությունը, ներքին էությունը: Ներքին ձևը, եթե ձևն ևս նշանակություն ունի և, իհարկե, ունի»[32]:

Վերնականներն ուժեղ էին միմյանցով: «Վերնատունը» համախոհների միություն էր: Յուրաքանչյուրը նրանցից զգում էր ընկերոջ ուսը: Իսահակյանը, «Մշակի» 1904 թ. թիվ 2-ում կարդալով Լ. ստորագրությամբ Լեոյի գրախոսականը Թումանյանի «Բանաստեղծություններ» (1903) նոր ժողովածուի մասին, անկեղծորեն վրդովվում է: Լեոյի գրախոսականն ավելի շուտ կարելի է համարել միտումնավոր, սուբյեկտիվ քննադատության արգասիք: Նա մասնավորապես գրում էր. «Ժողովածուն մի հայելի է, որի մեջ ընթերցողը տեսնում է մի հուսատու բանաստեղծի, որ սակայն չի զարգանում, առաջ չի գնում, այլ մնում է

[32] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 273-277:

քարացած», և որակավորում է Թումանյանին՝ «լեռներ երգող բանաստեղծը մնում է միակողմանի, միամիտ»: Թումանյանի պոեմներից միայն «Դեպի անհունն» է ընդունում, մինչ այդ քննադատելով «Պոետն ու մուսան» և «Սասունցի Դավիթը»[33]:

Իսահակյանը Թումանյանին ուղղված նամակում (1904, փետրվարի 23) գրում է. «Ինչո՞ւ էդ <...> Լեոն էլ քեզնից վազ չի եկել, ի՛նչ է ուզում ասել այդ մարդը, պետք է դրան իրեն տեղը ցույց տալ, «Վերնատունը» պիտի սկսե այսուհետև շա՜տ եռանդուն գործել, և հասարակության մեջ իրեն մասին վկայել, մի հանդես հրատարակենք կամ այլ բան, մեր գեղարվեստական սկզբունքները պարզենք, մեր գրուպան ցույց տանք, թե չէ բոլորովին դրանք մեզ հող ու մոխրի հետ կհավասարեցնեն»[34]:

Իսահակյանը հստակ մատնանշում է, որ Լեոն և նման բնույթի պահպանողական-հետադիմական գրական գործիչները հանդես են գալիս և՛ «Վերնատան», և՛ նրա զավակների դեմ, որ այնուհետև ևս կձգտեն հաստատել իրենց թվացյալ առավելությունը, հավատարմությունը իրենց աշտարակից երևացյալ «ազգային ակունքներին», ուստի «Վերնատունն» ավելի ակտիվ դիրքորոշում պետք է ունենա, վերնականները պետք է հանդես գան նոր ստեղծագործություններով, և ակնհայտ է, որ հենց «Վերնատան» խումբն է այսօր առաջատարը հայ գրականության: Սակայն Իսահակյանը պահանջում է ավելի արդյունավետ գործունեություն և նոր գրքեր: Թեև այս նամակը գրված էր «Վերնատան» ստեղծման 5-րդ տարեդարձին, սակայն այն ցույց է տալիս, որ ամեն ինչ չէ, որ խաղաղ ու անվրդով էր դարասկզբի թիֆլիսյան հայ գրականության երկնակամարում: Կար հնի պայքարը նորի դեմ: Եվ նորը իրեն առավել լիաթոք պիտի հաստատեր:

Ահա, երբ 1902 թվականի աշնանը Թումանյանը մի տևական ժամանակ բուժվում էր Աբասթումանում, մշտական նամա-

---

[33] «Մշակ», Թիֆլիս, 1904, թիվ 2:
[34] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 6-րդ, էջ 45:

կապրություն է ունեցել վերնականների հետ: Իսահակյանին գրած նամակում (նոյեմբերի 9) Թումանյանը պատմում է իր վիճակից, իր հոգսերից. «Առողջությանս մասին ի՞նչ ես հարցնում. մեզ նման մարդիկ ինչպե՞ս կարող են առողջ լինել էս ժամանակներում, էն էլ փառք Աստծու, որ կենդանի ենք, «Մշակի» ջգրու: Ես այժմ ավելի լավ եմ: Ուժասպառ եմ եղած ու ջղերս քայքայված, բոլորովին քայքայված: Բժիշկն ասում է, այս ջղերով ոչ կարելի է ապրել, ոչ պարապել, պետք է հանգստանաս, ապրես միանգամայն բույսի նման: Եվ ահա քեզ մի նոր վրդովմունք. հիմարը երևի չգիտի, որ բույսերն էլ են թառամում, և շատ բույսեր՝ մեզ նման՝ նույնիսկ աշունք չհասած: Նրանց տանջանքի մասին տեղեկություն չունի, և ինչ պետք է հասկանա նրանցից, քանի որ ականջը դնում է սրտիս, լսում է, լսում, ու իսկի այնտեղ էլ չի հասկանում, թե ինչ կա: Ասում է հանգստացիր, բայց մի՞թե հեշտ հանգստություն կա մեզ համար:

...Սակայն ես այն օրվանից եմ հանգստացել, ինչ որ համոզվել եմ, թե էլ չի լինելու այդ դիմումը (խոսքը Լ. Շանթի գրած շրջաբերական-նամակի մասին է, որով նա կոչ էր անում Թումանյանին օգնություն ցուցաբերել՝ վերջինիս բանաստեղծությունների նոր ժողովածուն տպագրելու համար - Ա.Ի.): Ինչ լինելու է թող լինի, բայց թող մեզ վրա չծանրանա զանազան գյադաների բարերար ձեռքն ու մուննաթը: Ամեն մարդուց էլ չի կարելի լավություն ընդունել»[35]:

Իսկ ինչպե՞ս էր ներկայացնում «Վերնատան» գործունեությունը, առօրյան, խնդիրները ինքը՝ Իսահակյանը: Այս պատկերացումները վերհուշի ձևով շարադրված են նրա «Հովհաննես Թումանյան» հուշագրությունում: Նախ. «Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում[36]: Հենց գրական ստուդիայի առաջնային գործերից է նոր երկերի ծա-

---

[35] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. IX, Երևան, 1997, էջ 359, 360:
[36] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ. 5-րդ, էջ 54:

նոթացումը գրչընկերներին, քննարկումներ, մտքերի փոխանակություն: Հիշենք Իսահակյանի «Հայդուկի երգերի» հետ կապված դրվագը: Եթե Թումանյանն ու Իսահակյանը սիրում էին իրենց նոր գրվածքները վերնականներին ընթերցել, ապա Դեմիրճյանը և Շանթը նախընտրում էին նոր գրած երկը մինչև հրատարակումը չծանոթացնել ընկերներին: Մանավանդ Դեմիրճյանը, որն իր նոր գրածները մինչ հրատարակումը գաղտնի էր պահում: Եվ ինչպես վկայում են ժամանակակիցների հուշերը, նա այդպիսին մնաց մինչև վերջ: Մինչդեռ Իսահակյանը երբեք չի երկյուղել իր գրածները հրապարակելուց և խանդավառվել է ընկերների կարծիքներով:

Այս տեսակետից շատ ուշագրավ է գրականագետ Ռուբեն Զարյանի «Ավետիք Իսահակյան» հուշագրությունում բերված մի հուշ-պատմություն՝ կապված «Վերնատան» հետ:

Զարյանը գրում է. «Խոսք բացվեց ստեղծագործական հոգեբանության շուրջը, այն մասին, որ ամեն մի գրող իր անհատականության, խառնվածքի համեմատ ուրույն դրսևորումներ ունի: ...Երբ բոլորն արտահայտվեցին՝ առանց, իհարկե, հարցը լուծելու, Վարպետը ժպիտը քթի տակ, դարձավ մեզ.

- Մի օր «Վերնատանը» խոսք բացվեց այն մասին, թե գրողը, երբ գրում է, պե՞տք է ուրիշներին ասի, թե ինչ է գրում: Ամեն մեկն ասում էր, թե ինքն ինչպես է վարվում: Ես մի բան ասի, Շանթը մի ուրիշ: Հիմի չեմ հիշում, թե ինչ: Հերթը հասավ Դերենիկին: Սա թե՝ «Ես ոչ ոքի ոչինչ չեմ ասում. նախ՝ դա կարող է ցրել, զրկել կենտրոնացումից. երկրորդ՝ կարող են կանխել, ինձնից լսել, գրել ու ինձնից էլ առաջ հրատարակել»: Թումանյանը, որ չէր խոսել, Դերենիկին առարկեց. «Ես քո էդ գաղտնապահությունը չեմ հասկանում: Մարդ էդքան էլ վախկոտ չպիտի լինի, գողանալս ո՞րն է, իմ պատմածը ուրիշը ուզում է՝ թող գրի. սյուժեն կարող է վերցնել, բայց էն հոգին, էն շունչը, որ ես պիտի դնեմ մեջը, հո՞ չի կարող վերցնել, պիտի դնի իր հոգին, իրա շունչը, ուրեմն՝ դարձավ ուրիշ գործ... Երբ ես մի պոեմ եմ գրում,

ավանդություն կամ հեքիաթ եմ մշակում, Դերենիկին հակառակ, պատահած առիթը չեմ փախցնում ու պատմում եմ: Պատմելիս էլ հետևում եմ, թե լսողը ինչպես է լսում, որտեղ՝ լարված ու հետաքրքրությամբ, որտեղ՝ ծանձրույթով, որտեղ՝ չհավատալով, տարակուսած կամ կասկածելով: Ու հետո, աշխատելիս, աչքի առաջ եմ ունենում: Դա ինձ շատ է օգնում»...»[37]:

Ի՞նչ կար ավելի հաճելի զբաղմունք երիտասարդ գրողների համար, քան գրական նորույթների քննարկումը ընկերովի: Ինչ տեսակետներ, կարծիքներ, գնահատականներ իրենք կարտաբերեին, ինչ նոր գիրք էին կարդացել, հրճվել մի նոր հեղինակով, կամ ընդհակառակը, և այս ամենը նոր իմաստ է ստանում, եթե դա քննարկում ես քեզ համախոհ ստեղծագործողների շրջանակում: Եվ նման զրույցները, վեճերը ժամեր, օրեր են տևել: «Ինչ նյութի շուրջը ասես,- շարունակում է Իսահակյանը,- չէր դառնում մեր զրույցը: Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին: Խոսում էինք ազգերի պատմություններից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից: Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը: Մեզնից յուրաքանչյուրը իր սիրած հեղինակն ուներ, որ ի մի գումարած ընդգրկում էր վերջ ի վերջո գրեթե բոլոր հանճարները: Կարդում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլինաներով, սերբական պոեմներով, մեր Սասունցի Դավթով և շատ ուրիշներով: Մեր բոլորի սիրածն էր Սայաթ-Նովան, որին բարձրացրինք հանճարների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույքներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին: Վստահ կարող ենք

---

[37] Ռուբեն Զարյան, Հուշապատում, գիրք առաջին, «Հայաստան», Երևան, 1975, էջ 166, 167:

պարծենալ, որ մենք վերակենդանացրինք նրան, տարածեցինք նրա համբավը և արծարծեցինք նրա երգերը»[38]:

Սայաթ-Նովայի հետ կապված դրվագը, անտարակույս, վերնականների վաստակն էր, որի շնորհիվ Գևորգ Ախվերդյանից հետո համարյա մոռացված հայ հանճարի անունը մտավ շրջանառության մեջ, հրատարակվեցին նրա տաղերը, և հայկական ժողովրդական երգի շտեմարանում նա գրավեց իր արժանի տեղը:

[38] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու , հտ. 5-րդ, էջ 55:

«ՆՎԵՐ ՎԵՐՆԱՏԱՆ» ՀԵՂԻՆԱԿԸ

«Դեմիրճյանը ինքնազոհ, հանգիստ գրող չէ: Նա երբեք գոհ չի եղել իր արվեստից: Նա որոնող, պրպտող միտք է: Նրա գրական ուղին ստեղծագործական պրպտումների ուղի է, տպտումների, չեղածի – հասնելու բայրաչակիր»:

Ավետիք Իսահակյան

Իր նշանավոր «Նվեր Վերնատան» բանաստեղծության մեջ Դեմիրճյանը մեկ հատված էլ ուղղել է ինքն իրեն.

ԻՆՁ

Դու ուզում ես ոչնչացնել թո՞ւյնը...
Դու ուզում ես դրանով մեռցնել մա՞հը...
Եվ հետո էլ ասում ես, որ սիրում ես
Գեղեցիկ բանե՞րը - թիթեռը, ծաղիկը,
Առողջությունը, սերը...
Բայց ասեմ ամենագեղեցիկ բանը աշխարհիս երեսին,-
Կյա՞նքը...
Դու ուզում ես ոչնչացնել նրա թո՞ւյնը...
Մի՞,
Ամենագեղեցիկ բաները թույնից են շինում:

Ահա այսպես, փոքր-ինչ ինքնասարկազմով է ներկայանում «Վերնատան» խմբի ամենաերիտասարդ անդամը՝ Դեմիրճյանը: Դեմիրճյանը «Վերնատան» մասին հուշերում պատմում է, թե ինչպես է տեղի ունեցել իր ծանոթությունը Թումանյանի հետ. «Դեռ աշակերտ էի Թիֆլիսի հայոց Ներսիսյան դպրոցի, երբ մի օր Ավետիք Իսահակյանն ինձ ծանոթացրեց Հովհաննես Թումանյանի հետ... Եվ ահա մի երեկո ես և Ավ. Իսահակյանը նրա բնակարանում... Ավետիք Իսահակյանը ներկայացրեց ինձ բանաս-

տեղծին, իբրև նոր հանդես եկած բանաստեղծի, հյուրընկալը ժպտաց և իսկույն ավելացրեց, որ «կարդացել է, ճանաչում է»[39]:

Իր հուշագրության մեջ Դեմիրճյանը փորձել է բնորոշել «Վերնատան» ֆենոմենը, նրա ինչ լինելը: Դեմիրճյանը գրում է. «Ի՞նչ էր մեր գրական ուղղությունը: Դա ոչ մի տերմինով չէր արտահայտվում: Դա որոշվում էր համաշխարհային և ազգային գրողների հանդեպ ունեցած մեր վերաբերմունքով: Մենք չէինք ընդունում Ռ. Պատկանյանին՝ պարզապես ազգայնական ուղղության համար: Շահազիզը, Ծատուրյանը մեզ թվում էին անարյուն և «տենդենցիոզ»: Ահարոնյանը նույնպես ընդունելի չէր իր ազգայնական ուղղության համար: Ռաֆֆին և Մուրացանը հարգվում էին իրենց գեղարվեստական հատկությունների համար միայն: Նույնը և Հովհաննես Հովհաննիսյանը, որի ազգայնականությունը մեղմանում էր «բնության և մարդկայնական» երգերով»[40]:

Եվ ինչպես որ Իսահակյանն էր գրում, վերնականները առավել սեր և հետաքրքրություն են տածել համաշխարհային դասական գրականության հանդեպ, այնպես և այս հանգամանքն է շեշտում Դեմիրճյանը. «Պետք է որոշակի և վճռականապես ասեմ, որ մենք պաշտամունքի առարկա էինք դարձրել համաշխարհային կլասիկներին, ուսումնասիրում էինք նրանց և խոսում բացառապես նրանց մասին: Կլասիկները մեր առօրյա, գործնական զբաղմունքն էին: Մենք ձգտում էինք գնալ նրանց ուղիով:

...Մենք սկսեցինք մեր հավաքույթներից դուրս նաև պարապել: Տանը պատրաստվում էինք ու ամեն շաբաթ հավաքվում էինք «Վերնատանը», քննադատում էսքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Շեքսպիրի, Բայրոնի և այլ կլասիկների»[41]:

«Վերնատան» աշխատանքը իր գործունեության մանավանդ առաջին հնգամյակում շատ արգասաբեր է եղել: Խոսքը

---

[39] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XII, էջ 169, 170:
[40] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 242, 243:
[41] Նույն տեղում, էջ 243:

«Վերնատան» զավակների ստեղծագործության մասին է: «1903-ին ես գնացի Մոսկվա,- վերհիշում է Դեմիրճյանը,- այնտեղից վերադարձա Թիֆլիս, ուր «Վերնատան» աշխատանքները շարունակեցինք, մանավանդ, որ բավական նյութ կար: Վաղուց հրատարակվել էր [Իսահակյանի] «Երգեր ու վերքերը» (1898 թ.- Ա.Ի.), ես գրել էի «Կյանքի տեսիլը», Շանթն սկսել էր հետաքրքրվել դրամատուրգիայով <...> Թումանյանը սկսում էր հրատարակել իր բանաստեղծությունների ստվար հատորը: Մեր գրական զրույցների նյութը մի փոքր փոխվել էր: Թումանյանն օրավուր ավելի էր պնդում, որ պետք է մոտենալ ժողովրդին: Պետք է ունենալ իր սեփական ժողովրդի կապը: Ամենքս համաձայն էինք, բայց որ քննության էինք առնում, թե իրոք մեզանից ամեն մինը կոնկրետ ի'նչ կապով է կապված ժողովրդի հետ, դուրս էր գալիս ոչ այնքան ներդաշնակ պատկեր: Աղայանը «Գուգարաց աշխարքից» էր, Թումանյանը թագավորում էր Լոռում, Ավետիք Իսահակյանը ուներ իր երկիրը՝ Շիրակը: Իսկ Շա՞նթը, ե՞ս... Որոշվեց, որ Շանթը երկիր չունի, իսկ ես կարծես թե կապված եմ «Ճորոխի հովտին»: Այս կատակների տակին կար, անշուշտ, ճշմարտություն, և էականն այն էր, որ Աղայանը, Թումանյանն ու Իսահակյանը մեծապես կապված էին իրենց «գավառների» հետ»[42]:

Ինչպես ասվեց, շատ հաճախ «Վերնատան» անդամներից որևէ մեկի նոր երկի առաջին քննարկումը պետք է իրենց խմբակում անցկացվեր: Նման քննարկման մասին է վկայում Թումանյանի հետևյալ երկտողը Փիլիպոս Վարդազարյանին (1904, նոյեմբեր). «Էս իրիկուն Դերենիկը կարդում է իր նոր պոեմը: «Վերնատունը» խնդրում է շնորհ բերես ժամը 9-ին»[43]:

Տպավորությունը այնպես չպետք է լինի, թե «Վերնատան» անդամները մշտապես իրենց խմբակի շուրջն են եղել, նրանցից յուրաքանչյուրը, լինելով երևելի անհատականություն, ազատ է

---

[42] Նույն տեղում, էջ 250:

[43] Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), Երևան, 2010,Գիրք 1-ին, էջ 542:

եղել իր ծրագրերում, եղել է «Վերնատան» նիստերին, իսկ հաճախ և բացակայել է: Օրինակ, Դեմիրճյանը 1904-1905 թթ. ձմեռը անց է կացրել Բաքվում, այնտեղից հումորով լի նամակ է հղում Թիֆլիս իր վերնական ընկերներին (1905, 6 մարտի, Բաքու).

Г<осподи>ну Ованесу Туманяну

և Ավոյին մեր տիրացու,
Լևոն փաշին գաղթականացու:
Զգում եմ, ներում, որ բաղնիսներում
Նստած՝ հենց տաք-տաք բրթբրթում եք դուք.
Համակրությո՞ւնս այն հնուց բանին,
Որ «Շատերն անցան, ասոնք ալ կանցնին»:
Մի պատվեր ունեմ տալու Ավոյին,
Որ իմ պոեմը դրկի «Լումային»:
Պայմանի մասին թող այսպես խոսի,
Որ նախ՝ այն տպեն տետրում այս ամսի,
Վարձատրությամբ և ձեր որոշմամբ:
Պետք է այս գործը շուտ վերջացնել,
Հասել են օրեր դեպ Սուիզ անցնել,
Ամենաուշը, եթե սուտ չասեմ,
Անպատճառ ամսեն:
Եթե չընդունվի, թո՛ղ մոտը պահվի,
Քանզի այստեղ չէ թե պոեմ
Չեմ կարամ թե գլուխ պահեմ:
Նահապետին բարև ճամփի
Եվ հարգալից մի մեծ դոմփի:
Ջավոյին էլ բարև ինձմեն,
Միամիտ մնա Աբրահամեն:
Հազար ողջույն Օլիային
Եվ, մանավանդ, նոր Հուկոյին:
Համբույր, բարևներ՝
ձեր Դերենիկ:

Դեմիրճյանը սիրում էր ընկերներին դիմել բաց-նամակի ձևով, հաճախ իմպրովիզացիոն բնույթի կատակներ անել: Դեմիրճյանի մասին իր կենդանության օրոք չտպագրած «Ընկերություն»* հուշերում Ավետիք Իսահակյանը գրում է. «Թիֆլիսում, մեր արդեն պատմական դարձած «Վերնատանը» <...> խոսում էինք օրվա գրական և հասարակական նորությունների մասին, ընթերցում էինք հին և նորագույն հեղինակների երկերից, արտահայտում մեր կարծիքները, մեր տպավորությունները: Դերենիկը, տակավին շատ երիտասարդ, դիպուկ դիտողություններ էր անում, որ հաճախ սիրով ընդունում էինք: Նա մեր երգիծաբանն էր: «Վերնատան» թշնամի գրողների և քննադատների ծաղրանկարներն էր գծում և սուր, խայթող էպիգրամներ էր գրում նրանց հասցեին»:

Հենց այս մասին է գրում Դեմիրճյանը Հովհաննես Թումանյանին նվիրված իր հուշերում. «Մենք սկսեցինք քննադատական վերաբերմունք ցույց տալ մեզանից դուրս եղած գրականությանը և քննադատությանը: Ես զավեշտական թերթիկներ էի կազմում հատուկ այդ երեկոյի համար, ուր ծաղրանկարում էի զանազան անձնավորությունների: Մի անգամից ավելի Լեոն դառել է իմ նկարների հերոսը: Թումանյանին դա շատ էր դուր գալիս»[44]:

Դեմիրճյանը սիրում էր նաև հաճախ ալեգորիկ, այլաբանական ներբող-ուղերձներ գրել, ինչպես օրինակ՝ «Նվեր Վերնատան» բանաստեղծությունը (1912 թ.), որը որպես վերհուշ է գրվել երբեմնի զորեղ խմբակի իր ընկերների մասին:

Այս երկի տպագրման առթիվ Դեմիրճյանը նամակ է հղում «Գեղարվեստ» ամսագրի խմբագիր Գարեգին Լևոնյանին (1917, հուլիսի 9, Բելի Կլյուչ).

«Սիրելի Գարեգին.

---

* Ավետիք Իսահակյան, «Ընկերություն», «Գրական թերթ», 1977, մայիսի 18, N 18:

[44] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 247:

Ահա խոստացած նյութս: Սա նվեր է «Վերնատանը», որի գոյությունը շատերը չեն իմանում, բայց դու գիտես: Տպել տուր հետևյալ կարգով. Աղայանին, Թումանյանին, Շանթին, Աղբալյանին, Ավոյին և ինձ: Սա մեր հասակի կարգն է: Վերնագիրը՝ «Նվեր Վերնատան»[45]:

Դեմիրճյանի ֆոնդում (ԳԱԹ, N 791) պահվում է «Վերնատան» վերաբերյալ հետևյալ ինքնագիրը. «Դա մի գրական փունջ էր, գրական հոգեկցության: Դա նշանակում էր Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան և սրանցից կրտսերը՝ ես: Դա երիտասարդությունն էր մեր գրականության, ուր Աղայանն անգամ հոգով երիտասարդացել էր: Դա գարունն էր անկրկնելի, երանելի և միշտ հիշելի»[46]:

Ինչպես վկայում է 1908 թ. հոկտեմբերի 29-ին ժնևից Դեմիրճյանի գրած նամակը Հովի. Թումանյանին, մեր գրողները ամեն հարմար առիթով վերհիշում են «Վերնատունը». «Լևոնի հետ բավական եղանք, խոսեցինք, հուսադրվեցինք... է՞հ, հիմի էլ որտեղ երկու վերնատունցի կպատահեք, շարունակեցեք միևնույն ապարդյուն արհեստը: Ուսերս կոտրվում են այս կյանքի ծանր բեռի տակ, և ահա, դրա համար, ոչինչ ուրախ բան գրել չեմ կարող և չեմ սպասում, որ գրես... Քաջազնունուն ղրկել եմ պոեմս («Դեպի տիեզերք».- Ա.Ի.), նոր ձևով... Շատ կուզենայի նախ՝ Վերնատուն ուղարկել, կուզենայի նաև՝ դեռ էլի սրբագրել...»[47]:

---

[45] Նույն տեղում, էջ 317:
[46] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. I, էջ 427, 428:
[47] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 310:

«ՎԵՐՆԱՏԱՆ» ԹԱՏՐԵՐԳԱԿԸ

«Էլ չկա Շանթը – ինքն էպրեց միտքը Եվրոպա: Դաս է դարձիս դրդիզայով – նրա համար, որ Եվրոպա գնա, դասագիրք է շինում, որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, գարնանն սպասում է, որ Եվրոպա...».

Հ. Թումանյանի նամակից՝ գրած Փ. Վլադիսլավլևին. (1908, մարտի 18-19):

Խորհրդային շրջանի քննադատական հոդվածներում կամ մամուլում «Վերնատունը» հիշատակելիս հաճախ բացակայել են երկու անուն՝ Լևոն Շանթ և Նիկոլ Աղբալյան: Մենք գիտենք, թե ինչու, և վաղուց ժամն է շատ խնդիրներ այս առնչությամբ վերանայել ու վերագնահատել: Չէ՞ որ խոսքը ոչ միայն խոշոր ու անձնվեր քաղաքական գործիչների, այլև XX դարի հայ դրամատուրգիայի և գրականագիտության ամենամեծ դեմքերից երկուսի մասին է:

Շանթին է ուղղված Դեմիրճյանի «Նվեր Վերնատան» ուղերձում հետևյալ իմպրովիզ ալեգորիկ հատվածը.

ՇԱՆԹԻՆ

Սարը վեր, սարը վեր, գոչելով
Գնում ենք ծիծաղով, կանչելով
Սարը վեր գարունքով
Թող երթանք մենք սիրով
Մինչև որ սարի վեհ կատարին
Կողջունենք սարը վար գիշերին:
Սարը վար երբ կիջնենք
Լուռ անուշ կննջենք
Սարը վար սուզելով մեր հոգին
Ու գիշեր կգրկե ամենքին:

Շանթը խմբակի միակ թատերագիրն էր, մյուսները, ճիշտ է, փորձեր արել էին այդ ասպարեզում, բայց դա ժամանակավոր բնույթ է կրել կամ էքսպերիմենտ, երիտասարդական, ինչպես օրինակ՝ Իսահակյանի մոտ: Մինչդեռ Շանթը դրամատուրգ էր «ողն ու ծուծով»:

Խմբակում Իսահակյանի ամենահին ծանոթը Շանթն էր, նրանք միաժամանակ սովորել են Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (Շանթը ավելի բարձր դասարանում), իսկ հետո էլ զարմանալի զուգադիպումով՝ Լայպցիգի նշանավոր համալսարանում: Եվ էլի վերադարձ Կովկաս և 1900-ական թթ. միասին «Վերնատանը»: Որպեսզի պատկերը լրիվ լինի, հարկ կա ասելու, որ Շանթի ապագա կնոջ՝ Ջավահիր (Ջավո) Ներսիսյանի (1900-1901 թթ. սովորել է ժենի համալսարանում) և Ավետիք Իսահակյանի միջև ռոմանտիկ բնույթի սիրային վեպ է ծագել (այդ մասին ամենից խոսուն վկայում են Ջավահիրին 1900-1901 թթ. գրած Իսահակյանի նամակները): Երկուսն էլ եղել են ՀՅԴ անդամներ, ի դեպ, Իսահակյանը չնայած Շանթից վեց տարով փոքր էր, սակայն զգալի վաղ էր ընդունվել ՀՅԴ շարքերը: Բայց առավել մտերմություն է եղել Շանթի և Թումանյանի միջև:

Դեմիրճյանը Թումանյանի մասին իր հուշերում Շանթի վերաբերյալ տալիս է շատ բնորոշ եզրահանգումներ, կարծիքներ. «Իսկ Շա՞նթը, ե՞ս... Որոշվեց, որ Շանթը երկիր չունի... Այս կատակների տակին կար, անշուշտ, ճշմարտություն:

...Շանթը, որ արդեն իսկ հեռու էր որևէ «ժողովրդականությունից», ինչպես և ես, որ ժողովրդականությունը չէի հասկանում միայն թեմատիկայի և լեզվի արտաքին նշաններում»[48]:

Հաջորդ պարբերությունում Դեմիրճյանն անդրադառնում է Թումանյանի հայացքներին Շանթի առնչությամբ. «Իր մոտ գրական ընկերների ստեղծագործությունը նրան (Հովհ. Թումանյա-

[48] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 250, 251:

նին.- Ա.Ի.) շատ էլ չէր զբաղեցնում: Շանթի վրա նայում էր իբրև մի օտարերկրյա, էկզոտիկ երևույթի վրա, մի նավաստու, որ եկել է, ո՞վ գիտե որտեղից, և բնակություն է հաստատել Թումանյանի ափերում: Նրա ստեղծագործություններից միայն լուրջ հավանում էր «Լեռան աղջիկը», այն էլ իբրև զվարճալի ապրումներ մի պատանու, որ անծանոթ է «սարի կյանքին»: Ո՛չ առանձին նախանձախնդրությամբ էր դիտում նաև նրա պիեսների ներկայացումները: Շանթը Թումանյանի անձնական ընկերն էր կենցաղի մեջ ավելի, քան իբրև գրող»[49]: Փակագծերում նկատենք, որ միայն Շանթի առթիվ չէ, որ Դեմիրճյանը բերում է Թումանյանի փոքր-ինչ հեգնական գնահատականը, ևս մի օրինակ. «Թումանյանը շատ դիպուկ կերպով նկատում էր ուրիշ գրողների թերությունները և քմծիծաղով խոսում այդ մասին.

- Դա քյանդրբազություն է, կոկետություն, խարդախություն:

Նա չէր սիրում, օրինակ, Ահարոնյանի ճարճատուն ոճը, հռետորական կեցվածքը, Լեոյի թափթփված լեզուն, Փափազյանի խայտաբղետ շարահյուսությունը, Ծատուրյանի լրագրական լեզուն...

Միայն մի բան, Թումանյանն ինքն իր ստեղծագործության նյութն ու լեզուն որոշած լինելով՝ կարծում էր, թե ամենքն էլ պետք է և կարող են գնալ այդ ուղղությամբ»[50]:

Շանթն էլ Թիֆլիս տիտիկ չի տվել՝ մեկնել է հաճախ Բաքու, Շվեյցարիա, Փարիզ... 1901 թ. հունիսին Շանթը մեկնում է Հոլանդիա՝ Անտվերպեն քաղաք՝ հաշվապահական կուրսեր անցնելու նպատակով: Հուլիսի 16-ին նա Անտվերպենից նամակի ձևով հետևյալ էլեգիան է հղում Թումանյանին.

Ոսկի լուսինը աղտոտ երկինքեն
Ապշած կը նայեր «Վերնատան» գլխին,
Ուր կը մլավեր խոր ներշնչանքեն

---

[49] Նույն տեղում, էջ 263:
[50] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 268:

Լքված, միայնակ, պոչավոր ոգին,
Պոչավոր ոգին «նոր» քերթողության,
Որու ապերախտ սաներն աներես
Նոր ոգիներու, երկրպագության
Ելեր են գացել մեկը, է՜, Անվերս,
Առջևը հաշիվ, մուրհակ, տոմարներ,
Երկրորդը անտառ է քաշվեր, կըսեն,
Տարփանքով կախված «ծուլության» ուսեն,
Իսկ թե երրորդը ո՞ր դի է կորեր,
Չգիտե ոչ ոք,
Ոչ-ոք այդ մասին,
Ոչ իսկ բազմահագ
Vis-a vis ոգին[51]*:*

Էլեգիան գրված է մի post-carte-ի վրա, որի վերևի մասում պատկերված է մարդկային կերպարանքով լուսին, որը նայում է ցած, որտեղ շենքի կտուրին նստած է մի պոչավոր կատու, որին Շանթը կատակով անվանում է «պոչավոր ոգին «նոր» քերթողության»: «Երկրորդը անտառ է քաշվեր». նկատի ունի Թումանյանին, իսկ «երրորդը ո՞ր դի է կորեր». նկատի ունի Դեմիրճյանին:

Շանթը Եվրոպայում մնում է մոտ մեկուկես տարի: Հոլանդիա՝ Անտվերպեն և Ֆրանսիա՝ Փարիզ գտնվելու ընթացքում (1901, հունիս - 1902, սեպտեմբեր) նա հետաքրքիր նամակագրություն է սկսում Թումանյանի հետ: Ցավոք, Շանթին գրած Թումանյանի բոլոր նամակները կորսված են, մինչդեռ Թումանյանը պահպանել է Շանթի գրած նամակների մեծ մասը: Այդ նամակագրությունը վկայում է թե՛ նրանց ջերմ, ընկերական հարաբերությունների մասին, թե՛ այն մեծ դերի, որ խաղացել է

[51]Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908),Գիրք 1-ին, էջ 375, 376:

«Վերնատունը» գրողների կյանքում: «Վերնատունը» այսպես թե այնպես առկա է Շանթի գրած համարյա բոլոր նամակներում, բացիկներում:

Ինքնին մեծագույն հաճույք է կարդալ երկու հեղինակների նամակները՝ մշտապես թաթախված ընկերական հումորով, երևույթների, դեպքերի և դեմքերի անկեղծ ու անբռնազբոսիկ նկարագրումով կամ վերհուշով: Ահա Անվերս քաղաքում տնտեսագիտության «բարձունքները» նվաճող դրամատուրգը գրում է ընկերոջը (1901, նոյեմ. 1, Անվերս). «...խեղճ հայերենս փախեր մտեր է անկյուն մը և ապշած-ապշած կը նայի, թե սա ինչ խայտառակություն է: Եվ երբ հոգնած... լռիկ սենյակիս մեջ, լամպիս լույսին տակ, այս առևտրական տակնուվրայություններն, ակամա մտքերս կը թռչին Թիֆլիս ու դեմքիս ժպիտ մը կը ծլի, երբ կը հիշեմ, որ անցած տարի այս ատեն ամսվան մը մեջ Հոմերոս մը կը կարդայինք, երկու-երեք շաբաթվա մեջ Շեքսբիրեն բան մը կամ Էսքիլոսեն, ա՜հ, Պրոմեթեո՜սը. դառն ժպիտ մը կը ծլի շրթունքիս ու անուշ կարոտ մը մեջս»,- հիշում է 1900 թվականի ամառվա վերնատանյան ընթերցումները: Եվ իր հերթին հարցում է անում գրական անցուդարձից, իր ընկերների վիճակից. «Ի՞նչ հալի են մեր թերթերը, անկոթ «Մուրճը», փալանը կորուսած «Մշակը», հնադարյան «Նոր-դարը», ցամքած «Աղբյուրը», անտարազ «Տարազը» և մյուս մեթեորները:

Եվ մի՞թե Վերնատուննիս այդպես բոլորովին դատարկ է հիմա, ո՞չ ոք: Գրե աշուղ Իսահակին, որ ամոթ է, տղամարդուն չի վայլեր, այդպես փեթռտած շուշաններու ետևեն ախ-վախ ընելը, թող բան մը ընե, թող գրե, թող բանի մը պետք գա, բայց սրտե բխած աղվոր բան մը: Գիտեմ, որ իր փնտռած շուշանը իրական բուսնող ու թոռմող շուշաններեն չէ, այլ շուշան մը, որ միայն բանաստեղծի հոգիին խորքը կարոտեն կը ծլի ու պատրանքով կը սնանի և որ արտաքին շուշանի անունն ու քանի մը ձևերը

միայն ունի իր վրա: Թող նկարե մեզի իր այդ իդեալ Շուշանը, եթե անպատճառ իր Շուշանեն զատվիլ չի կրնար...»[52]:

Հիշյալ նամակի վերջում Շանթը սիրտ է տալիս Թումանյանին. «Այսպես ուրեմն՝ մնացեր ես դուն, մեր Վերնատան հավատարիմ պահապան, կու գանք, Հանես ջան, կու գանք կը ժողվինք նորեն, կը կարդանք նորեն մեր Սոֆոկլեսն ու Սերվանտեսը, կը խոսինք, կը խոսինք նորեն ամբողջ ծմեռվան երկար գիշերներով հինեն-նորեն, գյուղեն ու «խաչախներեն», տակնուվրա կընենք մեր սկզբունքներով, մեր տաղանդով, մեր գրածովն ու գրելիքներով...»[53]: 1901 թվի դեկտեմբերի 27-ին արվեստի երեք մուսաներ պատկերած բացիկ է ուղարկում Թումանյանին՝ հետևյալ քառատողով.

...«Ողջո՛ւյն Վերնատան գլխեն սրբազան»,
Ետ նայեմ, տեսնեմ մեր երեք մուզան,
Որ ծույլ կախ ընկած իրարու ուսեն
Վերջին բարև մ'են բերեր Անվերսեն[54]:

Զարմանալի վավերագիր է նամակ հասկացությունը. երբեմն անցած մի կարևոր դեպք, իրադրություն, որի պատճառը, հիմքը որոնել ես բազում երկերում, բացահայտվում է շատ անսպասելիորեն, հեղինակի նամակում՝ հաճախ գրված բոլորովին ուրիշ մի առիթով: Բաց նամակը հենց այն վավերագիրն է, որ ճշմարտացիորեն լուսաբանություն է տալիս: Ահա Շանթի նամակը (Անվերսից, 1901, դեկտեմբերի 30) Թումանյանին. «Իսկ դո՞ւն ինչ կընես, կը գրե՞ս, շատ ես լուռ, կը կասկածիմ, որ անակնկալ մը կը պատրաստիս ինծի: Մեր մյուս վերնատու-

---

[52] Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 4, Երևան, 1985, էջ 345, 346:
[53] Նույն տեղում, էջ 347:
[54] Նույն տեղում, էջ 348:

նականներն ի՞նչ կընին, բան գրած ունի՞ն, հոդ եղողներդ հավաքումներ ունի՞ք, թե՞ բոլորովին «անունը կա, ամանումը չի կա»: Գրած ես, թե նոր անդամ մըն եք գտեր մեր Վերնատան, այդ ինչ աներևակայելի գյուտ, մենք որ Դիոգենեսի լապտերով ամբողջ երկու տարի կը փնտրեինք. ընտրելիդ ես ամենևին չեմ ճանչնար «իբրև մարդ», իսկ «իբրև գրագետ» շատ քիչ, այնպես որ իմ ձայնս կը դնեմ բացարձակորեն քու տրամադրությանդ տակ: Եթե մյուս ընկերներու ձայնն ալ շահի, մկրտեցեք, միայն լավ աչքի առաջ ունեցեք «մարդը», միայն «գրագետը» հերիք չէ, միայն համենայն դեպս քու քանդիդատը լավ վկայականով կներկայանա. ով որ կոնտորա, բանկ ու առևտրական վարժարան մտնելեն վերջը նորեն Պառնասի փեշերեն ի վեր կը մագլցի՝ վստահելի է, գոնե գրական տեսակետեն: Դերենը, ուրեմն, Մոսկվա: Ինձի ուղարկե իր հասցեն, առանց մոռնալու: Իսկ Նիկոլին ու Ավետիքին իմ սրտագին բարևները: Տարին չի լրացած գուցե հավաքվենք նորեն մեր Վերնատունը, որ երևի մինչև այն ատեն ավելի ընդարձակված ալ կըլլա... գոնե իբրև շենք»[55]:

Այս նամակից իմանում ենք նախ, որ երկու տարվա պատմություն ունի «Վերնատունը», ուրեմն եթե ըստ Շանթի գրածի երկու տարի՝ 1901 թ. դեկտեմբերից հետ գնանք, կստացվի 1899 թ. դեկտեմբեր, որը և պիտի համարենք «Վերնատան» ստեղծման սկիզբը:

Ինչ վերաբերում է Շանթի հիշատակած «Վերնատան» նոր անդամին, դա հավանաբար Փիլիպոս Վարդազարյանն էր՝ Թումանյանի մտերիմ ընկերը, գործարանատեր, որը միայն այդ շրջապատում կարող էր անցած լինել «առևտրական վարժարանի և բանկի» բովով: Փիլիպոս Վարդազարյանը գրել է սիրողական վոդևիլներ, որոնց մասին միշտ թեթևակի հեգնանքով են արտահայտվել Թումանյանն ու իշխանուհի Մարիամ Թումանյանը: Վարդազարյանը, իհարկե, չդարձավ «Վերնատան» լիիրավ անդամ, սակայն նա, այսպես թե այնպես, բավական

[55] Նույն տեղում, էջ 350:

հաճախ մասնակցել է «Վերնատան» հավաքույթներին:

Համենայն դեպս, Շանթին անծանոթ այդ «նոր անդամը» երբեք չէր կարող լինել Նիկոլ Աղբալյանը, որին հենց նույն մեր հիշատակած նամակում Շանթը սրտագին բարևներ է ուղարկում: Պարզապես անբացատրելի է, թե ինչպես են «Թումանյանի տարեգրության» առաջին հատորի կազմողները նման վրիպում բաց թողել Շանթի՝ 1901 թ. դեկտեմբերի 30-ի նամակը ծանոթագրելիս[56]:

Շանթի նամակները մի ճշմարտություն են հաստատում, թե ի՞նչ մեծ դեր է խաղացել «Վերնատունը» իր զավակների կյանքում: Ահա Փարիզում՝ Եվրոպայի սրտում, Շանթը համեմատություն է անցկացնում. «Համենայն դեպս այնքան բարձր եմ (նկատի ունի իր սենյակը.- Ա.Ի.), որ շարունակ տրամադրությանս տակն են Փարիզի գեր, նիհար, կզկված ու շիք, դեմոկրատ ու արիստոկրատ... ծխնելույզները. այնքան բարձր, որ ճակատս բաց կրնամ ներկայանար մեր Վերնատունը. վե՜ր, միշտ վե՜ր, այդ չէ՞ մեր Վերնատան աղվոր դևիզը» (1902, ապրիլի 7), «Ամենեն առաջ մեր Վերնատան, վերջը՝ ընկերության»,- գրում է Շանթը 1902 թ. սեպտեմբերի 27-ին, իսկ մի այլ նամակում (1908, նոյեմբերի 23)՝ «Ողջ լեր ի Վերնատան, ամեն»:

Եվ մերկապարանոց խոսքեր չեն, որ վերնականներն ապրում են միմյանց հոգսերով. ահա, Շանթը Փարիզից կարոտով լեցուն հարցում է ուղղում Թումանյանին իր ընկերների մասին (1902, ապրիլի 7). «Վերնատունը, ուրեմն, նորեն սկսեր է կենդանանալ, ինչպես որ կը գրես, ուրախ եմ, երևի այդ ալ մեր Վերնատան ճակատագիրն է, միշտ երեք-երեք, սիրուն թիվ է, համենայն դեպս: Նիկոլին ու Ավետին ջերմ համբույրներս, ի՞նչ կընեք, ի՞նչի մասին կը խոսեք, ի՞նչ կը ծրագրեք: Նիկոլը աշխատանք ունի՞ գոնե: Ավետի մասին գիտեմ որ հարցնելն ալ ավե-

---

[56] • Տե՛ս Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), Երևան, «Գիտություն», 2010, էջ 405:

լորդ է, ամառը ջրաղաց, ձմեռը հողմաղաց: Անոր ջրաղացը հիմա դուն ալ եղար ուրեմն, այնպես որ միակ չմկրտած հեթանոսը ես եմ այժմ, վերադարձիս՝ առաջին պարտքս»[57]:

Այլևս չենք խոսում, որ հումորը, ընկերական կատակը միշտ ներկա են Շանթ-Թումանյան նամակագրությունում. «Հանձնարարեր էիր, որ շատ գրեմ ու շատ հարցնեմ քու Վարյայիդ մասին: Բայց ես մինչև հիմա շնորհքով բան չի կրցա հասկնամ քու այդ ուհի վարդիդ պատմությունեն, որ ինչպես կերևի, շատ փշոտ տեսակեն է ըլլալու: Ինչո՞ւ Իսակի «դեղատոմսովը» չես գործը սկսեր. «Վարդ մի' սիրե, փուշ ունի»: Այ, օրինակ՝ մանիշակ մը, շուշան մը, նունուֆար մը, կամ այդ կարգի անվնաս բան մը ընտրեիր: Ըսենք ինքը շուշաններեն շատ խեր չի տեսավ... Ի դեպ, ո՞ւր է Ավետիքը հիմա և ի՞նչ բանի է: Հույս ունիմ, որ առաջիկա ձմեռ գոնե բոլորս միասին կըլլանք և մեր Վերնատունը հավիտենապես դատապարտված չի մնար միշտ Հայր-Որդի... Հոգին սուրբե մը բաղկացած ըլլալու... Շատ-շատ կը ցանկայի, որ հավաքվեինք, սեղմվեինք իրար, իրար սիրող, իրար հասկցող մեր խումբը ու քիչիկ մը կենդանացնեինք, տաքցնեինք Վերնատունը... Գիտես որ ամեն բաներն առաջ և ամեն բաներն մեծը մեր Վերնատան ընթերցումներն են» (1902, սեպտ. 6, Լոզանից)[58]:

Երբ վերջանում է Շանթի հաշվապահական «առաքելությունը» եվրոպաներում, և նա վերադառնում է Թիֆլիս, Թումանյանը ընկերոջը՝ Իսահակյանին հայտնում է այդ լուրը (1902, նոյեմբերի 9, Թիֆլիսից). «...Իսկ Շանթը առևտրական բոլոր կուրսերը վերջացնելուց հետո եկել է մտել «Վերնատուն»: Դեկտեմբերին պատրաստ կլինի նրա դրաման («Եսին մարդը».- Ա.Ի.)»[59]:

---

[57] Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, գիրք 4-րդ, էջ 353:
[58] Նույն տեղում, էջ 360-361:
[59] Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9-րդ, էջ 359-360:

Հիշյալ շրջանում Շանթը, ի դեպ, ապրում է Թումանյանի տանը, հենց Վերնատան սենյակում: Այդ կապակցությամբ 1902 թ. հոկտեմբերի 11-ին Թումանյանը գրում է իր տիկնոջը՝ Օլգա Վասիլևնային. «Շանթի մասին ի՞նչ գրեմ, եթե ես այդտեղ էի եղել, իհարկե, չէի թողնիլ, որ հյուրանոցում իջներ, մոտս կբերեի և քանի ամիս ուզում էր մնար»: Ապա ավելացնում է. «Եթե դու կարողանաս հարմարեցնել ճաշ է, ընթրիք և այլն, և այլն, որ առանձին դժվարություն չունենաս՝ ինչ կա որ, գրեթե եղբայրս է և այդքան ազնիվ ու կրթված մի մարդ, ուրիշ ոչ մի ծանրություն չի կարող լինել»[60]:

Չորս օր անց նա էլի նույն հարցի առնչությամբ տիկնոջը ուղղած նամակում ասում է. «Վերջիվերջո դու քեզ կատարյալ ազատ զգա, և եթե ճշմարիտ դժվարություն և անհարմարություն կա քեզ համար, գրիր ինձ՝ ես կկարգադրեմ: Այս բոլորից այն չի հետևում, թե շատ ոչ ցանկալի հյուր է կամ կասկածելի մարդ: Դու գիտես, որ նա իմ ազիզ ընկերն է ու նրա դեմ կամ նրա անձնավորության մասին չի խոսքը... Միանգամայն վարվիր այնպես, ինչպես դու ես ուզում, համարելով, որ անկախ ես ու ազատ ես...»[61]:

Ի վերջո բազմաչարչար Շանթը հանգրվանում է Թումանյանի բնակարանում, բայց ի՞նչ կարգավիճակով: Թումանյանի նամակից տիկին Օլգային առատ տեղեկություն ենք ստանում (1902, 21 հոկտեմբերի, Աբասթուման). «Շանթի մասին ահա թե ինչ կասեմ: Ուրախ եմ, որ այդպես աշխատում ես գոհ անել, որպես իմ լավ ընկերոջը, և, անշուշտ, այդ քեզ համար բավական չարչարանք կլինի: Նրա վճարի մասին ոչ մի խոսք չլինի քո կողմից և նայիր նրա վրա, ինչպես հյուրի վրա: Որովհետև, և մեզ արդեն առաջուց հայտնի պատճառներով, անհարմար է нахлебник պահել... Մի խոսքով, վճարի խոսք չլինի, մանավանդ գործի էլ չէ, իսկ Ֆիլիպի (Վարդազարյան.- Ա.Ի.) գրածին նայելով՝ ինքը՝

[60] Նույն տեղում, էջ 332, 333:
[61] Նույն տեղում, էջ 336:

Շանթը, պիտի վճարի Ֆիլիպի միջոցով: Ես այս մասին Ֆիլիպին էլ կգրեմ»[62]:

Թողնելով բնակարանային խնդիրը նամակագիրների խղճին՝ վերադառնանք «Վերնատան» հոգսերին, որոնք ինչպես կային խմբակի սկզբում, այնպես էլ ծագել են տարիներ անց՝ 1908 թ.: Մի հատված Վ. Տերյանի նամակից Ց. Խանզադյանին (1908, մայիսի 12). «Ի միջի այլոց նա (Լ. Շանթը) ասաց այն ալմանախի մասին, որ մտադիր են եղել հրատարակել ինքը, Հովհ. Թումանյանը, Դեմիրճյանը, Ավոն և Ko, սակայն նա ասում է, որ իրանց ձեռնարկությունը քնած է և հազիվ թե գլուխ գա: Սա այն ալմանախն է, որի մասին խոսում էր նաև Թումանյանը: Երբ ես հայտնեցի,- գրում է Տերյանը,- որ մենք վախենում ենք, թե մեր գրական գեներալները [63] ետ մնացած բաներից ուղարկեն և եթե չտպագրենք նեղանալով հեռանան, նա (Լ. Շանթը,- Ա.Ի.) ասաց, որ նախ նոքա վատ բաներ չեն ուղարկի, որովհետև կամաչեն, երկրորդ, գրողի համար մեծ նշանակություն ունի, թե ո՞րտեղ են լույս տեսնում իր գրվածքը և այլն»[64]:

Եվ ահա ևս մի հատված մեր հերոսների նամակագրությունից, որ անսքող ու անթաքույց բացահայտում է թե՛ իրենց հոգատար վերաբերմունքը մեկը մյուսի հանդեպ (շատ հաճախ այդ ուղերձները ողողված են անչար հումորով), թե՛ նաև իրենց գրական օջախի՝ «Վերնատան» հանդեպ: Ահա, 1902 թ. նոյեմբերի 25-ին Թումանյանը Աբասթումանից գրում է Թիֆլիս իշխանուհի Թումանյանին (իսկ մինչ այդ նա իշխանուհուն ուղարկել էր Շանթի գրվածքները). «...երանի թե Ձեր խրախուսանքներն առաջ բերեն և բեմական գրողներ: Երանի թե մեր Շանթից մի բան դուրս գա, և իր դրամայով չփչացնի դրամատուրգի այն

---

[62] Նույն տեղում, էջ 342, 343:

[63] Բանասերի ծանուցում. Ընդամենը 8 տարի է, ինչ գործում է «Վերնատունը», սակայն համեմատաբար նորերս գրականություն մտած Տերյանը «Վերնատան» զավակներին կոչում է «գրական գեներալներ»: «Հայրերի և որդիների» պրոբլեմը միշտ էլ առկա է եղել գրականության պատմության մեջ:

[64] Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), էջ 625:

հռչակը, որ մենք առանց դրամայի վաստակել ենք նրա համար»[65]:

1902 թ. նոյեմբերի 7-ին Շանթը Թիֆլիսից գրում է Թումանյանին՝ Աբասթուման. «Նու, վերջապես, մի քանի պայծառ տող գրեցիր ինձի: Քեֆդ նայե, սիրելիս, բոլորը դատարկ բաներ է, կկարգադրվի ամեն բան իր կարգովը... Ամբողջ Վերնատունը գայիսոնիս տակն է, մուսաներն էլ ծակերից ու ծուկերից երբեմն ներս են նայում»: Նույն նամակում ակնարկում է, որ նոր դրամա է գրում՝ «Եսին մարդը» նկատի ունենալով, ապա անդրադառնում է Փիլիպոս Վարդազարյանին, որը Թումանյանի ընկերոջ և հովանավորի կարգավիճակով «ժամանակ առ ժամանակ» իր վոդևիլներն էր ներկայացնում «Վերնատան» անդամներին. «Ամեն չորեքշաբթի մեզ ներկայացնում է մի նոր վարիանտ և դեռ ոչնչով չի կարելի ապահովված համարել, որ հասած ենք վերջին վարիանտին:

Մեր չորեքշաբթիի «նիստերին»,- շարունակում է Շանթը,- չգիտեմ զգում ես թե ոչ, բայց միշտ ներկա ես և դուն: Ամեն մեկը բերում է քեզնից ստացած նամակները և կարդում խորին լռության մեջ, խորին երկյուղածությամբ և քիչ է մնացեր «հոտընկայս»: Կարդում ենք նաև դրսից ուղարկած դրամաները... «a la Շեքսբիր, a la Իբսեն և a la ոչինչ: Ամեն բան կա մեջը և ամեն տեսակը, միայն մեկ բան չի կա, գեթ մի քանի կոպեկի գրական արժանիք»[66]:

Թումանյանին իհարկե հաճելի էր նման նամակներ ստանալը, և նա տեսնում էր, որ «Վերնատունը» հաջողությամբ շարունակում է աշխատանքները իր բացակայության դեպքում ևս: Հստակ երևում է, որ կայուն ձևավորված էր թերևս ժամանակի ուժեղագույն հայ գրողների ընկերությունը, որն ի դեպ պաշտպանում էր իր սկզբունքները և դրույթները: «Վերնատան» բոլոր անդամներն իրենց խմբակի շահերի պաշտպաններն էին: Եվ «Վերնատան» թե՛ գործունեությունը, թե՛ հոգեկան բարձր մթնոլորտը մշտապես դրեց յուր դրոշմը իր զավակների վրա:

---

[65] Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9-րդ, էջ 374:
[66] Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք 4-րդ, էջ 374:

«ՎԵՐՆԱՏԱՆ» ՏԵՍԱԲԱՆԸ

«Ու.. Վերնատուն կրփակվեմ, Քանի հոգիս կրփարի...»:
Ն. Աղբալյանի նամակից՝ գրած Հ. Թումանյանին (1904, հունվարի 7):

«Վերնատան» միակ ոչ բելետրիստ հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր՝ պոեզիայի հազվագյուտ զգացողությամբ օժտված գրականագետ, հայագետ և քաղաքական գործիչ:

Դերենիկ Դեմիրճյանն իր «Նվեր Վերնատան» անմոռաց շարքում հետևյալ խոհական էտյուդն է ընծայել ընկերոջը:

Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Ի՞նչ ընծայեմ քեզ, քո հոգուն սազական:

Բայց ի՞նչ եմ հարցնում, արդյոք ի՞նչ է սազում ընծայել այն հոգուն, որ տիեզերական լրջության է ունկնդիր.-

Միա՛յն և միա՛յն մի խաղալիք:

Այո, խաղալի՜ք... Որովհետև ինձ թվում է, որ այդ իմաստության ճամփադ բռնելով՝ կհասնես այն մեծ իմաստության, որի անունն է մանկություն:

Խաղա՛ խաղալիքը - դրանումն է և՛ գեղեցկությունը, և՛ իմաստությունը, և՛ կյանքը:

Բայց մի՛ կոտրիր խաղալիքը, որ տեսնես թե ինչ կա նրա մեջ:

Ավա՜ղ, խաղալիքների մեջ ոչինչ չկա, խաղալիքների մեջ ունայնություն է ու տխրություն»[67]:

Գուցե դրա համար, որ ինքը բանաստեղծ չէր, Աղբալյանը բոլորից շատ, կեսլուրջ, կեսկատակ, չափածո գործեր է գրել «Վերնատան» և նրա հերոսների առնչությամբ:

Թումանյանի՝ 1902 թ. նոյեմբերի 9-ին Իսահակյանին գրած մեր հիշատակած նամակում ընկերական զվարճանքով լի տողեր

---

[67] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. I, էջ 64:

կան Նիկոլ Աղբալյանի վերաբերյալ. «Նիկոլից երկար նամակ ունիմ, շատ լավ է, պատկերն է ղրկել... Նիկոլի հասցեն չգիտեմ, թե գրեմ: Ինձ էլ գրել էր, թե նամակ գրիր Պետերբուրգ՝ Николаю, ես էլ գրեցի՝ С. Петербург — Николаю, но не второму, а самому последнему Николаю. Հայոց ժամումը երգում է, ռուսաց իկոնները ուսումնասիրում, ուսումնասիրությունն էլ, ինչպես գրում է, ինձ է նվիրում: Ա՜յ մի նվեր, որ իսկի չէի կարող երազել երբևիցե»[68]: Նիկոլ Աղբալյանին վերնականների գրած նամակները համարյա չեն պահպանվել, մինչդեռ նրա գրած նամակների մեծ մասը պահպանվել է: Նիկոլ Աղբալյանը Պետերբուրգից Թումանյանին (1902 թ. նոյեմբերի 20-ին) պատասխան նամակ է գրում՝ համեմելով այն չափածո քառատողով. «Մի ոտանավոր էի գրել, Աբասթուման որ հասներ նամակս, միտք կունենար, հիմի չունի: Բայց արտագրում եմ ձեզ զրկած չլինելու համար մի բավականությունից.

Ու երբ հավաքվեք Աբասթումանում,
Դուք չմոռանաք, որ այստեղ մենակ
Խեղճ վերնականը տխրում է, տրտմում,
Որպես բնիցը հեռու մի թռչնակ»:

Նույն 1902 թ. դեկտեմբերի 6-ին Պետերբուրգից Ավետիք Իսահակյանին Աղբալյանը տեղյակ է պահում. «Օհաննեսը գովքով էր խոսում իր նամակում (բնագիրը պահպանված չէ.- Ա.Ի.) քո վերջին ոտանավորների մասին, որ սակայն ես չեմ տեսել, «Մուրճ» ձեռք չեմ գցում»[69] (ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, N 2638):

Աղբալյանը իր մի շարք հայեցակետերը ազգային գրա-

---

[68] Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9-րդ, էջ 360:
[69] Աղբալյանը նկատի ունի Իսահակյանի «Է՜յ կանաչ ախպեր, դու բարով եկար...» և «Էս ի՞նչն է ամպում գիլ թևին կուտա...» բանաստեղծությունները:

կանության կառույցի, հայ բանահյուսության բարերար դերի և Թումանյանի պոեզիայի նշանակության մասին շարադրել է Պետերբուրգից 1903 թ. մարտի 1-ին Թումանյանին գրած նամակում. «Ես էլ նամակ չէի գրի, որովհետև շատ խառնված եմ և նամակ գրելու գլուխ չունեմ, եթե չկարդայի Մուրճի 4 N-ը և քո ու Ավետիքի գրածները... Չգիտեմ, արդյոք ինչպես են նայում քո գրածների վրա այդ տեղերի, «գրական շրջաններ» ասած տեղերում, արդյո՞ք հասկանում են դրանց մեծ նշանակությունը ազգային գրականության համար, թե չէ, բայց ինչ վերաբերում է ինձ, ես ամեն անգամ, երբ այդպիսի բան եմ կարդում, ասում եմ՝ երանի նոր սերունդին, որ մեծանում է այդ տեսակ բաներ կարդալով, որի հիշողության մեջ այդ տեսակ հարազատ պատկերներ ու ավանդություններ են լինելու փոքրուց... Հիմի երեխաները մեծանում են քո և Ավետիքի գրածները կարդալով կամ կարդալու են:

...Այդպես եմ նայում, որ քո գրածները ստանում են մեծ նշանակություն, որքան էլ գեղարվեստական այս ու այն պակասությունն ունենան: Ամենամեծ երկերը ամբողջ աշխարհի գրականության մեջ նրանք են, որոնք լեգենդների ու հեքիաթների անհատակ գանձարանից են առած:

...քո գրածները, որոնց համար, իբրև հայ և իբրև մարդ շնորհակալ եմ քեզանից»[70]:

«Վերնատան» հիրավի միակ տեսաբանն ու քննադատը՝ Աղբալյանը, շատ աչալուրջ հետևում է թե՛ գրական մամուլի կարծիքներին, թե՛ վերնականների և թե՛ այլ հեղինակների գնահատականներին՝ տրված իրենց խմբակի գրական արտադրանքին: Նա գրում է Իսահակյանին Թիֆլիսից Ալեքսանդրապոլ 1903 թ. հուլիսի 2-ին. «...Առիթ եղավ խոսելու մեր «Վերնատանը», և ես ստիպվեցի պաշտպանելու մի քիչ վիրավորական ձևով, այսինքն՝ որ մի բան գնահատելուց առաջ պետք է հասկանալ, այսինքն՝ վերապրել, վերազգալ, կրել հոգով: Ցավում եմ հոգով, եթե մեր

---

[70] Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5-րդ, Երևան, 1998, էջ 369:

«Վերնատունն» այսպես է, էլ ի՞նչ խոսես զանազան խմբագրությունների և ընթերցողների մասին: Անկասկած ներկայումս ոչ մի հեղինակ մեզանում քեզանից հարուստ գաղափարներ չունի:

Ի՛նչ որ տարօրինակ մտքեր են ձեռք բերել մերոնք, հավանորեն Շանթի ազդեցությամբ, Գեղարվեստի մասին, ամեն ինչ խաղ համարելով - և կարծես ձեռք են քաշել իրանց հոգին ու բնությունը ուսումնասիրելուց, հասարակ, տարրական մի պայման ոչ միայն ամեն մի ինքնուրույնության ու բեղմնավոր գործունեության, այլև բանաստեղծության ընդհանրապես: Մեր Օհաննեսի համար այդ բանը այն աստիճան վնասակար չէ, մանավանդ ուշ էլ է. նրա ընտրած դաշտը այդ զենքերի կարիքը շատ չունի»[71]:

Աղբալյանը դեռևս իր առաջին գրականագիտական հոդվածներում, իսկ առավել չափով իր հետագա գրվածքներում, շատ հստակ է պատկերացրել այն վիթխարի դերը, որ խաղացին հայ պոեզիայի զարգացման գործում Թումանյանը և Իսահակյանը, և մշտապես շատ հստակ և օբյեկտիվ է պատկերել նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական հանճարը չընկնելով անհիմն դատողություն-գնահատականների գայթակղիչ գիրկը, հոգևոր տիտղոսներ չպարգևելով բանաստեղծներին, այլ հստակ բնորոշել նրանց ստեղծագործությունը որպես բարձրագույն նվաճում հայ պոեզիայի: Ահա նա գրում է Իսահակյանի առնչությամբ.

«Լինելով մեզ ընկեր իբր սրտաբեկ և մահազգաց՝ ան վեր է մեզմե իր հոգիին ապրումներով: Ամենեն առաջ ան համառ երազողն է մեր մեջ, որ երբեք չէ հաշտված իրական կյանքին հետ... Եվ ապա անոր մեջ միշտ կենդանի ապրում մըն է համազգացումը տիեզերական կյանքին... Նիցշեի ազդեցության տակ, որ տիեզերական հռչակ ուներ մեր բանաստեղծի երիտասարդ ժամանակ, ան մի պահ կարծեց, թե կոչված է լինել մարգարե: Այս ապրումին սաղմը սակայն ան ուներ, երբ դեռ Նիցշեն չէր ճանաչեր: Այս

[71] ԳԱԹ, ԳԼՖ, N 2640:

ապրումը ծնունդ էր իր բնածին համազգացության բնության կյանքին:

...Գրականության պատմության մեջ որոշ և հաստատուն է Ա. Իսահակյանի տեղը: Ան կու գա Հ. Թումանյանեն հետո և ձեռք կմեկնե Վ. Տերյանին: Իր անունն ու գործը անկորնչելի ստացվածքն են Հայոց Գրականության: Քանի կա սեր, երազ ու հիասթափություն, քանի կա անցավորին ապրումն ու համազգացումը բնության, կան ու կմնան մեր բանաստեղծի ընտիր երգերն ու մրմունջները: Հայոց լեզուն կըրնա փոխվիլ, բայց անոր լավագույն երգերը կմնան ու կխոսին հայ սրտերում...»[72]: Այս տողերում փայլուն երևում է հենց Աղբալյան քննադատի, խոհուն մտածողի տաղանդի աստիճանը, իրոք հոդված կա, որ մի ամբողջ աշխատություն արժե:

Իսկ երբ լույս տեսավ Թումանյանի «Բանաստեղծություններ» (Թիֆլիս, 1903) նոր ժողովածուն, Աղբալյանը Պետերբուրգից ընկերոջը ընդարձակ նամակ է գրում (1904, հունվարի 7-ին): Նամակի սկզբում ուղերձ-ողջույնն է բոլոր վերնականներին, որն ավարտվում է հետևյալ քառատողով.

Դո՛ւք եք աչքիս երևում,
Դո՛ւք, աղ Հայոց աշխարհի...
Ու... Վերնատուն կըկանչեմ,
Քանի հոգիս կըվառի...

Ինչպե՞ս չհամաձայնվել «աղ» համեմատության հետ, երբ այդպես էլ կար, և ինչպես Շանթն է պաշտամունք տածել «Վերնատան» հանդեպ, այնպես էլ Աղբալյանը: Բայց գանք նամակի բուն տեքստին. «Ստացել եմ «Բանաստեղծություններդ», շնորհակալ եմ շա՜տ-շա՜տ: Ստանալուս պես մի շնչում կարդացի մինչև գիշերվա ժամ 2-ը: Դուր եկավ ինձ հրատարակությունը,

---

[72] Ն. Աղբալյան, Ընտրանի, «Ավետիք Իսահակյան», Երևան, 2005, էջ 81, 83:

մաքուր ու սիրուն, ճաշակով՝ պատիվ հրատարակիչներին: Մի համեմատություն Ավետիքի գրքի* հետ... և բավական է, որ կոնտրաստավոր Բաքուն ու վայելուչ Թիֆլիսն երևան հայտնապես: ...Մանրամասն քննություն կգրեմ, հավանորեն, որովհետև շատ բան ունեմ ասելու թե' քո և մեր Ավոյի մասին և թե' հայ բանաստեղծության ընդհանրապես:

...Այդ բանաստեղծությունը («Համերգը»,- Ա.Ի.) ...մի սքանչելի գոհար է մեր բանաստեղծության մեջ, արժանի մեծ արվեստագետի գրչի՝ Պուշկինի, Լերմոնտովի... Շուտով կլինի քեզ նվիրված երեկույթը, երևի, շատ բան կխոսվի: Կգրեմ ժամանակին: Այս տարիս շատ է խառը: Մեր Ավետիքը մի լավ բան ունի ասած.

Սազը չի թողնում, որ հայդուկ դառնամ,
Սուրը չի թողնում, որ աշուղ դառնամ:

Հիմի իմն է դառել. դասը չի թողնում, որ գրող դառնամ, գիրը չի թողնում հացատեր դառնամ»[73]:

Պետերբուրգում 1903 թ. հունվարի 19-ին կազմակերպված թումանյանական երեկոյի մասին Աղբալյանը գրում է բանաստեղծին հունվարի 24-ի նամակում՝ տալով ճշմարիտ պատկերը տեղի գրական բարքերի. «Այստեղ առաջին անգամ տեսա, թե որքան թշվառ հասարակություն ունենք, դեռ պետք է ձեր իրավունքները պաշտպանենք... Մինչդեռ քեզ համարում են հրապարակով «ոտանավոր գրող»: Գամառ-Քաթիպայից հետո մարդ չեն ուզում ճանաչել, ուրեմն դեռ կռվով պետք է ձեռք բերեք «բանաստեղծի» իրավունքը, արդեն ծագում են նոր աստղեր: Որքա՜ն գործ կա

---

* Նկատի ունի 1903 թ. Բաքվում լույս տեսած Իսահակյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն (տպարան «Արոր»), որը, հակառակ Իսահակյանի կամքի, քանզի բանաստեղծը գտնվելիս է եղել Թիֆլիսում, լույս է տեսել տարբեր տպագրական տառատեսակներով և խայտաբղետ ձևավորմամբ:

[73] Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 4-րդ, էջ 370, 371:

անելու, որքա՜ն կարծիքներ խորտակելու...»[74]:

Նույն Պետերբուրգից երեք օր անց՝ 1904 թ. հունվարի 27-ին, Ավետիք Իսահակյանին է գրում. «...«Բանբերի» համար մի հոդված եմ գրել գրքիդ մասին, թռուցիկ, երկտող և ցրված, բայց բաներ կան մեջը. մեղքս քավում եմ, որի մասին մի անգամ գրել էի: Երեկույթիդ նկարագրությունը ղրկել եմ Վերնատուն, գուցե կարդացած լինես, լավ էր...»: Այս նամակը արժեքավոր է նրանով, որ Աղբալյանը իր տված գնահատականն է մեկնաբանում: Խոսքը 1903 թվականին Բաքվում հրատարակված «Բանաստեղծություններ» գրքի մասին է: Աղբալյանի հիշատակած հոդվածը՝ վերնագրված «Երգ ու վերքից հետո», տպագրվել է Սանկտ-Պետերբուրգում լույս տեսնող «Բանբեր գրականության և արվեստի» տարեգրքի Բ գրքում (էջ 189-198):Նույն նամակից նաև տեղյակ ենք դառնում, որ Պետերբուրգում կազմակերպվել է ինչպես Թումանյանի, այնպես և Իսահակյանի երեկույթ՝ կապված նրա վերջին գրքի հետ: Այնպես որ Պետերբուրգում էլ Աղբալյանը շարունակել է հայ գրականության ուսումնասիրման և տարածման աշխատանքը:

«Պետերբուրգցի» Աղբալյանը մեկ տարի անց էլ «հյուսիսային մայրաքաղաքից» կարոտով թաթախված տաղ է ուղղում Թումանյանին և վերնականներին (1904, նոյեմբերի 23).

Չէի ուզի, որ գրեմ
Ձեզ այս տեսակ տխուր էջ,
Բայց ի՜նչ անեմ, որ հույզեր
էլ չեն ծնում սրտիս մեջ:
Մնաս բարև, Օհաննես,
Եվ դո՛ւ, սիրուն իմ Դերեն,
Եվ դու, Շանթիկ, թող մի ժամ
Դարդ ու վիշտս ձեզ գերեն...[75]

---

[74] Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5-րդ, էջ 372, 373:

Կրկին Թումանյանին մի երկու ամիս անց Ալեքսանդրապոլից գրած նամակում այս անգամ Աղբալյանը զգալի լավատեսորեն է տրամադրված, հիրավի հայրենի հողը կենսական նոր ուժեր է հաղորդում, և նա իր ոգևորումը հղում է վերնականներին.

Արհավիրքի ահեղ ժամին,
Ամենուրեք հողմ ու շառաչ,
Վերնատնով հանց մի մարմին,
Վստահորեն դիմենք առաջ:
Ոգու լուսով լուսավորենք
Գոռ ամբոխի ուղին նսեմ
Ու նրա հետ առաջդիմենք
Դեպի իդեալ վեհ ու վսեմ[76]*:*
<1905>

Աղբալյանը համոզված է, որ վերնականներն են հայրենի գրական վերընթացի առաջամարտիկները: Վերնականները, երբ հեռու են եղել Բեհբության 50 տնից, միշտ կարոտով են այն հիշել: Դեմիրճյանը ժնևից Թումանյանին գրում է (1906, մայիս). «Հուսով ենք, որ գուցե մի օր կհավաքվենք ի Վերնատուն, նրանք, մենք, դու և առհասարակ, այն հարկի տակ, ուր Աղայան, Շանթ, Աղբալյան, Վարդազարյան և Դերենիկ քեֆ կանենք»[77]:

Թե՛ նամակները, թե՛ իրողությունները վկայում են, որ վերնականները բոլորն էլ, թեպետ իրենց վիթխարի տաղանդին, մշտական նյութական կարիք են զգացել, անխտիր, առանց բացառության: Ահա Նիկոլ Աղբալյանը գրում է Թումանյանին (1907 թ. փետրվարի 12, Լոզանից). «Դեկտեմբերի 19-ից կանո-

---

[75] Նույն տեղում, էջ 374:
[76] Նույն տեղում, էջ 374, 375:
[77] Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), հտ. 1-ին, էջ 570:

նավոր ապրուստից զուրկ, քաշ եմ գալիս ողորմածությամբ: Ո՛չ դառնալ կարող եմ, ո՛չ մնալ: Շտապիր, Աստված կսիրես, այլևս սիրտ չմնաց»[78]: Երեք օր անց կրկին նույն թեմայով. «Այ քեզ նամակ, փոխանակ գրականությունից և այլն գրելուց, գրում եմ չորս երես դրամի մասին. գրականությունը սիրելու համար էլ պետք է կուշտ լինել»[79]:

Շուտով Աղբալյանը և Դեմիրճյանը ստանում են Լոզան (Շվեյցարիա) Թումանյանի ուղարկած 80 ֆրանկը: Եվ ինչպես գրում է Աղբալյանը Թումանյանին (1907 թ. հունիսի 11-ին), մերժում է Ամերիկայից ստացած հրավերը՝ աշխատելու ՀՅԴ պարբերական «Հայրենիք» ամսագրի խմբագիր: Քանզի, ինչպես նախօրոք (1907 թ. մարտի 20-ին, Լոզանից) գրել էր Թումանյանին, իրեն առավել ոգևորել էր առաջարկը Թիֆլիսում գրականության դասեր ունենալ: Աղբալյանը Թումանյանին գրում էր. «Քո նամակը, որ մեծ հաճույքով կարդացի, ինձ ուրախացրեց: Եթե իսկապես հայոց նոր գրականության դասեր տան ինձ, ամենալավ վիճակում դրված կլինեմ, այն է՝ հացը գտնել սիրած պարապմունքով: Դրան կարելի էր կցել տեսություն գրականության, որ, իմ կարծիքով, կարելի էր ամենահետաքրքրական առարկան դարձնել՝ չոր ու ցամաք սահմանումների տեղ սովորեցնելով աշակերտներին բանաստեղծական ու վիպական երկեր կարդալ ու վայելել. ուրիշ խոսքով կիրք ճաշակի տեր նոր հասարակություն պատրաստել, նոր միջավայր և դրանով հնարավոր դարձնել նոր ու կատարյալ գրականության աշխարհ գալը»[80]:

Այս տողերում չի՞ զգացվում Հայաստանի Առաջին հանրապետության ապագա լուսավորության նախարարի կերպարը: Նա, որ բացառիկ գրական ճաշակ ուներ, որ առաջինը ողջունեց

---

[78] Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 4-րդ, էջ 377:
[79] Նույն տեղում, էջ 378:
[80] Նույն տեղում, էջ 381:

գրականություն մուտքը և՛ Ավետիք Իսահակյանի, և՛ Եղիշե Չարենցի, որ եղավ Հայաստանի կառավարության լավագույն նախարարի տիպար և մինչև վերջ հավատարիմ մնաց հայրենիքին ծառայելու իր ուխտին, որ օտարության ու քաղաքական վտարանդիության մեջ էլ չվիատվեց և Լևոն Շանթի հետ ձեռք ձեռքի տված՝ ստեղծեց «Համազգային» կրթական միությունը, և այդ միությունն ստեղծելու ջանքերի մեջ անպայման վառ են եղել «Վերնատան» ավանդները:

«ՎԵՐՆԱՏՆԻՑ»՝ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

«...Թերևս այժմ կայմենք մեր «Վերնատունը» մեր երկրում ու վերջին օրերս միասին անցկացնենք»:
Հ. Թումանյանի նամակից՝ գրած Ավ. Իսահակյանին (1921, հոկտեմբերի 4):

Հարկ է ասել, որ վերնականները միշտ ընդառաջ են գնացել նոր, խոստումնալից գրական տաղանդներին: Այս տեսակետից հատկանշական է նրանց վերաբերմունքը Վահան Տերյանի հանդեպ, ով ավելի ուշ մտավ թիֆլիսյան գրական երկնակամար: Իսահակյանի հուշերից՝ Վահան Տերյանի մասին, տեղյակ ենք լինում, որ երբ Թիֆլիսում 1908 թ. Տերյանը երկրորդ անգամ հանդիպում է Իսահակյանին և կարդում է բանաստեղծություններ իր նոր՝ «Մթնշաղի անուրջներ» գրքից, Իսահակյանը շատ բարձր գնահատական է տալիս. «Հուզված կարդում է ոտանավորները, մեկը մյուսի ետևից, քանի առաջանում է ընթերցումը, ավելի է հուզվում, ես սրտով և ուշով հետևում եմ ընթերցումին: Տերյանը չավարտած՝ ես անհամբերությունից մղված՝ գոչեցի. «Կեցցե՛ս, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարերգությունը սա է - մաքուր լիրիկա»: Հուշագրության այս հատվածում Իսահակյանը մեջ է բերում Տերյանի խոսքերը. «Հ. Թումանյանն էլ շատ հավանեց: Երկուսիդ կարծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար: Այլևս քննադատությունից վախ չունեմ»:

«Երեկոյան եղա Հ. Թումանյանի մոտ,- շարունակում է հուշը Իսահակյանը,- և հիացմունքս հայտնեցի Վահանի բանաստեղծությունների նկատմամբ:

- Հա է՞, շատ դրուստ ես ասում: Շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ: Պատկերները թեև թույլ են և քիչ են, բայց լեզուն՝ մաքուր զտված և արծաթե զանգի պես՝ հնչուն: Իմ ազդեցությունը բնավ չտեսա այնտեղ, բայց քո և

Դերենիկի տրամադրությունների արձագանքը կարծես կա, մանավանդ՝ քո: Դու ի՞նչ ես կարծում, համենայն դեպս՝ մեր Վերնատան մեջ պատվավոր տեղ ունի... Երկու տարվա ընթացքում հրաշքը կատարվել էր, Վահանը գտել էր իրեն և արվեստի գաղտնիքը»,- եզրափակում է հատվածը Իսահակյանը (V, 117-118): Եթե «Վերնատունը» շարունակեր իր աշխատանքները, հավանական է, որ Տերյանն էլ կդառնար նրա ամենաերիտասարդ մասնակիցը: Բայց, ավա՜ղ: Ոչ մի բան հավերժ չէ այս երկնքի տակ:

«Վերնատան» աշխատանքները դադարելուց դեռևս առաջ Դեմիրճյանը Թումանյանի մասին իր հուշագրությունում նշում է այն ախտանշանները, որ կնպաստեն դրա փակմանը. «1905 թվին ես գնացի Շվեյցարիա,- գրում է Դեմիրճյանը,- ուր մնացի մինչև 1910 թիվը: Թումանյանը մասնակցել էր հայ-թուրքական ընդհարումների խնդրին: Մասնավորապես Թիֆլիսը շատ բան էր տեսել: Բայց առաջին մեծ ու տխուր լուրը, որ Շանթը բերեց Թիֆլիսից և անձամբ Թումանյանից, այն էր, որ «Թումանյանը բարեկամացել է Լեոյի հետ, մինչև անգամ հրավիրում է իր տուն...»: Լուրը իսկապես տխուր թվաց:

- Ի՞նչ, ուրեմն «Վերնատան» ավանդությունների դե՞մ...- դառնացա ես:

- «Վերնատունը» փաստորեն գոյություն չունի այլևս,- փիլիսոփայեց Շանթը:

Թե ինչո՞ւ ես մինչև այդ օրը չէի մտածել «Վերնատան» վախճանի մասին, չգիտեմ: Բայց ես չհամաձայնեցի Շանթի հետ, նա էլ չառարկեց շատ»[81]:

Հենց այն փաստը, որ Արծրունու պահպանողական ճյուղի ներկայացուցիչ, ամենավառ «մշակական» Լեոն սկսել է ընկերություն անել Թումանյանի հետ և այն հարկի տակ, որտեղ բոլորովին ուրիշ ճամփով են փորձել զարգացնել հայ գրականությունը և միշտ հակահարված են տվել Գրիգոր Արծրունի-

[81] Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հտ. XIV, էջ 251:

«Մշակ»-Լեո տարած պահպանողական քաղաքականությանը, այսինքն՝ հնի պայքար նորի դեմ... ինչ է, ուրեմն նորերը վերանայո՞ւմ են իրենց դիրքերը: Ահա Դեմիրճյանի տարակուսանքի պատճառը: Ուրեմն հասցվում է առաջին հարվածը «Վերնատան» սկզբունքներին:

Հենց Հովհաննես Թումանյանի կեսլուրջ-կեսկատակ նամակում՝ գրված (1908, մարտի 18-19) Փիլիպոս Վարդազարյանին, արդեն զգացվում է, որ վերնականները կարծես թե վեր են աճել իրենց տարազներից, որ ժամանակի հովերի հետ շատ բան փոխվում է, թեև, ըստ էության, առաջին հայացքից, ամեն ինչ մնում է նույնը. «Եվ առհասարակ - թեև փոփոխություններ եղած են, բայց էլ էն աշխարհքն ու էլ էն մարդիկն են, էլ էն Աղայանցը, թեև այժմ, էսպես ասած, հարստացել է, այսինքն՝ դասագրքերը մի գումար են բերում տարեկան, որ ինքն էլ է զարմացել: Սոցիալ-դեմոկրատ դարձավ անցյալ տարի, բայց շուտ անցավ: Այժմ էլ հայոց եկեղեցու «Պարգևատուն» է երգում, հայ ազգի կենացն է խմում ու լացը գալիս է էդ ժամանակ: Էլ էն Շանթը - ինքն էստեղ միտքը Եվրոպա: Դաս է տալիս տրտնջալով - նրա համար, որ Եվրոպա գնա, դասագիրք է շինում, որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, գարնանն սպասում է, որ Եվրոպա գնա, վերջապես կնոջն ու երեխաներին արդեն ուղարկել է, որ ինքն էլ ստիպված Եվրոպա գնա...»[82]:

Եվ հաջորդ նամակը՝ գրված նույնպես Փ. Վարդազարյանին, մի երկու շաբաթ անց, շատ հարցերում ստույգ պարզաբանում է մտցնում (1908, ապրիլ <առաջին կես>, Թիֆլիսից). «Տեսնում ես աշխարհքը մի դատարկ ու հիմար բան է, դու էլ ղոնախի պես, մի քանի օրով եկել ես ու վաղը կամ մյուս օրը գնալու ես - շատ կարճ ու պարզ մի բան... Մեր «Վերնատունը» բանում է մեղվի փեթակի նման: Նոր մոտիկ ընկեր-բարեկամներից ուզում եմ հիշել Ահարոնյանին և... Լեոյին: Այո', միշտ իրար

---

[82] Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. X, Երևան, 1999, էջ 38, 39:

հետ ու իրար մոտ: Արի ու աշխարհքի բաները հասկացի: Եվ շատերը չեն կարողանում հասկանալ, բայց ես - շատ հեշտ: Երևակայիր, որ Լեոն մի շատ միամիտ ու բնավորությամբ էլ մի խեղճ մարդ է: Շատ շատերից ավելի լավ ընկեր, իսկ ինչ վերաբերում է զանազան հայացքների - էդ առանձին: Շատ բաների մասին էլ, և մանավանդ, մեր «Վերնատան» մասին, նա ուրիշ կարծիք ունի այժմ: Բայց էդ երկրորդական բան է»[83]:

Իզուր չէ կախման կետեր դրել Լեոյի ազգանունից առաջ: Փաստորեն այս նամակը գալիս հաստատում է և' Շանթի, և' Դեմիրճյանի տպագնապները «Վերնատան» հետագա ճակատագրի վերաբերյալ: Այս տրամադրություններին կարծես գալիս ավելանում են Իսահակյանի տարակուսանքները կովկասահայ մտավորականի ճակատագրի վերաբերյալ: Իսահակյանը գրում է (1908 թ. մարտի 30-ին Ալեքսանդրապոլից). «Գնում ես այս ու այնտեղ և լսում ես սրտաճմլիկ բաներ - աղքատության, սարսափելի աղքատությունը համատարած է, և չպիտի իմանաս, թե ի՞նչ կնշանակի մեր քաղաքի կամ գավառի աղքատությունը, սև չոր ցամաք հացի են կապված, և դա էլ չկա, գյուղերում սովից ինքնասպանության դեպքեր են եղած <...> եկած օրից տրամադրությունս սաստիկ վատացավ <...>, սիրտս կոտրած ոչինչ չեմ կարող անել <...>, բայց Թիֆլիս վերադառնալ էլ չեմ ուզում, մի խոսքով մրից ելա, մրջուրն ընկա, համբերեմ, տեսնեմ կարելի է հաշտվեմ կամաց-կամաց ու մի քիչ բան շինեմ:

Դուրս է գալիս, որ մեզ համար ոչ մի լավ տեղ գոյություն չունի, հիմա եմ զգում, որ ինձ արտասահման միայն կարող եմ լավ զգալ, մի խոսքով տրամադրությունս լավ չէ...» (տե՛ս բնագիրը՝ ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, N 696):

Մենք արդեն նշել էինք այն փաստը, որ «Վերնատան» վեց անդամներից չորսը ՀՅԴ անդամ էին, այդ թվում այնպիսի հեղինակավոր դեմքեր, ինչպես Իսահակյանը և Թումանյանը, մյուս երկուսը մեկ տասնամյակ անց կլինեն Հայաստանի Հան-

[83] Նույն տեղում, էջ 40, 41:

ռապետության առաջին կառավարության կազմում, Շանթը՝ արտաքին գործերի նախարար, Աղբալյանը՝ լուսավորության: Իսկ ահա 1908 թ. աչքի ընկնող հեղափոխականներն էին «Վերնատան» երկու բանաստեղծները՝ Իսահակյանը և Թումանյանը, որոնք Թիֆլիսի պահնորդական բաժնում ունեին իրենց մականունները. Իսահակյանը՝ «Մոլոտ», Թումանյանը՝ «Ժոկեյ»:

1908 թ. դեկտեմբերի 17-ին Թիֆլիսի երկաթուղային կայարանում արտասահման մեկնելիս ծերբակալում են Ավետիք Իսահակյանին, իսկ դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը Թիֆլիսում Բեհբության 50 տանը՝ Հովհաննես Թումանյանին:

Ազգային բանաստեղծներին, ի թիվս հայ 160 մտավորականների, մեղադրանք էր հարուցված «Դաշնակցության գործով»: Ձերբակալման օրդերում գրված էր, ի դեպ, նույն տեքստը թե՛ Թումանյանի, թե՛ Իսահակյանի համար.

«Ունենալով կասկած հարուցող տեղեկություններ հակաօրինական ընկերության պատկանելու մասին և ըստ զինվորական դրության հայտարարված վայրերին վերաբերող կանոնների 23-րդ հոդվածի ես՝ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետի օգնականս, վճռեցի նախնական կալանքի վերցնել Հովհ. և Մուշեղ Թումանյաններին... [Ավետիք Իսահակյանին]... մինչև գործի պարզաբանումը. Ռոտմիստր Պրիգարա և ստորագրությունը»[84]:

Այսպիսով, կարելի է ասել, որ Թումանյանի և Իսահակյանի ծերբակալությամբ 1908 թ. դեկտեմբերին իր գործունեությունը դադարեցրեց «Վերնատունը»:

1911 թ. հունիսի 26-ին՝ Ղազարոս Աղայանի թաղումից անմիջապես հետո, Իսահակյանը լքում է Թիֆլիսը: Իր հուշերում նա նկարագրել է իր սիրելի ընկերոջ՝ Օհաննեսի հետ հրաժեշտի վերջին պահերը.

«Թաղումից հետո Թումանյանի հետ գնացինք իրենց մոտ:

---

[84] Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), հտ. 1-ին, էջ 680: Բնագիրը ռուսերեն:

Տխուր, սգավոր օր էր: Հավիտյան զրկվեցինք մեր սիրելի Նահապետից, ես էլ պիտի թողնեի հայրենիքս, և, թերևս անդարձ: Աննկարագրելի են այդ հրաժեշտի ծանր վայրկյանները: Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար, երկուսս էլ լուռ էինք. ո՛չ մի խոսք»[85]: «Վերնատունը» գոյատևեց ուղիղ 10 տարի, մի տասնամյակ, որը կարելի է կոչել «աստեղային»: Այն յուրահատուկ դպրոց հանդիսացավ թիֆլիսահայ գրասեր հասարակայնության համար, ծնունդ տվեց մեկը մյուսին գերազանցող գրական գլուխգործոցների:

Անկարելի է, որ մի ընկերական նախաձեռնություն, որ վերածվեց հայոց գրականության ընտրյալ զավակների, իրապես համախոհների ստեղծագործ միության, դիմանալով XX դարի սկզբի բարդ ու դրամատիկ վայրիվերումներին, իր անջնջելի հետքը չթողներ թե՛ իր զավակների, թե՛ XX դարի հայ գրականության զարգացման վրա:

«Վերնատունը» դադարեցրեց իր գործունեությունը, բայց նրա լույսը, նրա խորհուրդը մնացին նրա զավակների սրտում: Եվ «Վերնատունը» դարձավ յուրօրինակ սիմվոլ-խորհրդանիշ:

...Արդեն տարուց ի վեր թե՝ Հայաստանում, թե՛ Վրաստանում խորհրդային կարգեր են: Եվ այլևս Թումանյանի կողքին չեն վերնականները՝ Աղայանը՝ լույս նրա հիշատակին... Շանթը՝ քաղաքական վտարանդի, Աղբալյանը՝ քաղաքական վտարանդի, Իսահակյանը՝ քաղաքական վտարանդի. բոլորն էլ օտար երկնքի տակ... Այս երեքից երկուսը այլևս հնարավորություն չեն ունենալու վերադառնալու հայրենիք...

Սակայն «Վերնատան» վերածննդի հավատը երբեք չէր մարել Թումանյանի հոգում, և թեև ինքն էլ շա՜տ-շատ հարվածներ կրեց այդ վերջին տասնամյակում՝ զրկանքներ, հարազատների կորուստներ, հիասթափություններ ու հիվանդություններ, սակայն նրա մեջ անշեջ մնաց նոր «Վերնատուն» ստեղծելու

[85] Իսահակյան Ավ., Երկեր, հտ. 5-րդ, էջ 63-64:

գաղափարը՝ այս անգամ հայրենիքում, և իր նվիրական երազանքը նա հայտնում է ընկերոջը՝ Ավետիք Իսահակյանին (1921 թ. հոկտեմբերի 4, Թիֆլիս).

«Շատ բան ունեմ գրելու, բայց սպասում եմ - կգաս – կխոսենք և կանենք, ինչ որ կարող ենք անել:

...Թերևս այժմ կազմենք մեր «Վերնատունը» մեր երկրում ու վերջին օրներս միասին անցկացնենք...

Դե արի', Ավո ջան»[86]:

---

[86] Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10-րդ, էջ 396, 397:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՐՆԱՏԱՆ» ԶԱՎԱԿՆԵՐԸ

«Վերնատան» սկիզբը 3

«Վերնատան» նահապետը 8

«Վերնատան» կանթեղը 12

«Վերնատան» հայդուկը 21

«Նվեր Վերնատան» հեղինակը 29

«Վերնատան» թատրերգակը 35

«Վերնատան» տեսաբանը 48

«Վերնատնից» հավերժություն 57

Հրատ. խմբագիր Ա.Լ. Սահակյան
Համակարգչային էջադրումը Վ.Խ. Պապյանի

Հրատ. պատվեր № 787
Ստորագրված է տպագրության՝ 17.07.2017թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, տպագր. 4 մամուլ:
Տպաքանակը՝ 250 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

[1000 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0469279

N
A103213